Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

5984a

ՄԱՔՍԻՄ ԳՈՐԿԻ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԻՐԵՐԱՅ

(Ա. գրքոյկ)

Թարգմ. Հ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ

Տպարան „ՀԱՅԱՍՏԱՆ" Թիֆլիս

I

891.71
Գ-83

Հայ
5964
891.71
Գ-83
27 AUG 2006
19 NOV 2010

Թարգմանչական գրադարան

ՄԱՔՍԻՄ ԳՈՐԿԻ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

Ս.

Մաքսիմ Գորկի (կենսագր.).
Ընթերցող. Տարբաստանում.
Ձանձրոյթից:

Թարգմ. Զ. ՉԱՄԲԱՉԵԱՆԻ.

Տպարան „ՀԵՐՄԷՍ“ Ս. Նազարեանցի, Միք. փող. № 81
Թիֆլիս 1904 թ.

21 MAR 2013

10779

Дозволен. Ценз. Тифлисъ, 28-го Октября 1903 г.

60963·67

Մաքսիմ Գորկի

ՄԱՔՍԻՄ ԳՈՐԿԻ

Մաքսիմ Գորկին (իսկապէս Ալէքսէյ Մաքսիմովիչ Պէշկով) ծնուել է 1869 թուի մարտի 14-ին Նիժնի Նովգորոդ քաղաքում հարուստ ներկարար Կաշիրինի դուստր Վարվառէից և քաղաքացի (мѣщанинъ) Մաքսիմ Պէշկովից, որ արհեստով որմնաթուղթ պատրաստող էր։ Հայրն ու մայրը պսակուել էին ինքնագլուխ, որովհետև հարուստ պապը մտածել իսկ չէր ուզում իր աղջիկը պսակել կեանքի մէջ դեռ ևս նոր-նոր իրան ճանապարհ հարթող՝ աննշան մի մարդու հետ։ Հայրը մեռաւ 1872 թուին, երբ Գորկին դեռ երեք տարեկան էր և խոլերայով հիւանդ պառկած։ Մայրն ամուսնացաւ ուրիշի հետ և շուտով մեռաւ բարակացաւից։ Գորկու համար սկսուեց անտէր-անտիրական մանկութիւնը, իսկ յետոյ թափառական կեանքը։ Սկզբում նա ընկաւ դաժան պապի ճանկը և քիչ մեծանալով՝ սկսեց վազել ուսումնարան։ Բայց ծաղիկ հանելուց յետոյ ուսումն ընդհատեց և այլ ևս չշարունակեց։ Հազիւ

լրացաւ լինն տարին, նրան «աշկերտ» տուին մի խանութ, որտեղ ոսնամաններ էին ծախում։ Բայց այստեղ էլ եռացրած ջրից այրուածք ստացաւ, և տէրը նրան տուն ուղարկեց։ Առողջանալուց յետոյ աշակերտ մտաւ մի գծագրողի մօտ, որից փախաւ՝ չկարողանալով տանել նրա վարմունքը, և մի շոգենաւի մէջ խոհարարի օգնական դարձաւ։ Դուրս եկաւ, որ այս խոհարարը, Սմօրի, ոչ սիայն գրագէտ, այլ և ընթերցասէր մարդ էր։ Նա բարեսրտութեամբ տղայի տրամադրութեան տակ դրեց պատահական գրքերից բաղկացած իր գրադարանը, որտեղ Նեկրասովի կողքին կար Էկկարտս Հաուզէնը. այստեղ էր „Современникъ"-ի մի հատորը, „Искра"-ի խառնիխուռն համարները և հին վէպեր։ Շոգենաւի վրայ ծառայելիս Գօրկին շատ լաւ ծանօթացաւ Վոլգային, որի վրայ տիրող կեանքն է գլխաւորապէս նրա երկերը ներշնչողը։ Իսկ Սմօրիի գրքերի շնորհիւ նա սիրեց ընթերցանութիւնը։ 15 տարեկան հասակում նրա մէջ զարթնեց ուսման «բուռն ցանկութիւն» և դրա համար նա գնաց Կազան քաղաքը։ Սակայն «գիտութիւն գնելու համար փող չունէր», ուստի գիտութեան տաճարը մտնելու փոխարէն հարկ եղաւ ամսական երեք բուբլու մտնել բլիթներ պատրաստող մի գործարան և օրական 18—20 ժամ աշխատել։ Գօրկու

կեանքի այս ամենածանր ժամանակի մասին յիշողութիւնները ընթերցողը կգտնի նրա պատմուածքների մէջ — «Կոնովալով», «Բան և վեց և մէկ», «Նախկին մարդիկ»։ Այստեղ, հէնց Կազանում, նա հարկադրուած եղաւ իր պարէնը վաստակել պատահական աշխատանքներով—բեռ կրելով և փայտ սղոցելով։

Նա ապրում էր բօսեակների, «նախկին մարդկանց», շրջմոլիկների և մուրացկանների հետ, որոնք, իհարկէ, մեծ ծառայութիւն արին նրան՝ տաղանդաւոր պատանուն երես առ երես դնելով կեանքի անիծեալ խնդիրների հետ. չէ՞ որ այդ նախկին մարդկանցից ամեն մէկը «մի կենդանի դժնդակ հարց էր, որ մարմնացել էր հասարակութեան միջից դուրս շպրտուած մի մարդու ճակատագրի մէջ»։ Ի՞նչպէս ծագեց այդ թափառական, անոք—անինչ բազմութիւնը. ինչո՞վ կենդանի են նրանք իրանց նկուղներում։ Գօրկին այստեղ շատ բան տեսաւ և հասկացաւ։ Այստեղ նա ամբարեց իր ապագայ գործունէութեան համար ահագին պաշար, ամեն ինչ իր անձի վրայ փորձելով։ Կեանքի տականքն ու թափթփուկը ճանաչեց նա, ոչ թէ հարևանցի նայելով, այլ թափանցեց կեանքի խորը, անձամբ կրեց նրա բոլոր դառնութիւնները, և հէնց այդտեղ, այդ վիր՝ այդ տղմի մէջ գտաւ իր «հերոսներին», որոնք թէև գը-

ծուծ, հասարակութիւնից դուրս շպրտուած են, բայց դարձեալ մարդ են՝ հարուստ բազմազան խոհերով, հարուստ բազմազան զգացմունքներով։

1888 թուին Գօրկին անձնասպանութեան փորձ արեց։ Նա իր թոքը վիրաւորեց, բայց առողջացաւ, «տկարանալով՝ որքան հարկաւոր է». յետոյ խնձոր ծախեց, երկաթուղու ճանապարհի վրայ պահապան եղաւ և 1890 թուին նորից ընկաւ Նիժնի Նովգորոդ՝ զինուորակոչին ներկայանալու։ Այստեղ առաջին անգամ նա շփուեց ինտելլիգենցիայի հետ։ Զինուորական ծառայութիւնից ազատուելով՝ նա գնաց թափառելու. անցաւ Խրիմը, Բեսարաբիան, Կուբանը և ապա ընկաւ Թիֆլիս, որտեղ երկաթուղու արհեստանոցներում գործի եղաւ։ Հէնց այստեղ էլ 1892 թ. նա սկըսեց իր գրական գործունէութիւնը՝ տպելով „Кавказъ“ լրագրում «Մակար Զուդրա» պատմուածքը... Թափառական կեանքի և փորձութեան տարիները վերջացան։ Գօրկին թէև ոչ մի անգամից, սակայն վիճակի աւելի աննշան փոփոխութիւններից յետոյ՝ ոտք դրեց այն լայն ճանապարհը, որ մի քանի տարի յետոյ հասցրեց նրան հաժաշխարհային փառքի և մեծ ազդեցութեան։ Այժմ նա սիրելի հեղինակ է թէ Ռուսաստանում, թէ ամբողջ Եւրոպայում, թէ Ամերիկայում, մինչև անգամ Ճապոնիայում։

Ի՞նչ է ասում նա մեզ. ի՞նչ է քարոզում. որովհետև նա, ինչպէս և ամեն մի մեծ գրող, միևնոյն ժամանակ ուսուցիչ և քարոզիչ է. նա մեզ ասում է. ինչպէս հարուստ և գեղեցիկ է մեզ շրջապատող կեանքը։ Նա ասում է. ինչ լաւ է մարդը, թէկուզ նա անկման անդունդին հասած՝ մեծ քաղաքների նկուղներն ապաստանած լինի. խօսում է այն մասին, թէ ինչպէս ապականել ենք մենք այդ հարուստ, գեղեցիկ կեանքը մեր ստոր կրքերով, գռփելու ծարաւով, տգիտութեամբ և փառասիրութեամբ, մեր ագահութեամբ և մեր ու մեր մարդ-եղբօր անձը չըյարգելով։ (Журн. для всѣхъ).

ԸՆԹԵՐՑՈՂ.

Գիշեր էր, երբ ես փողոց դուրս եկայ մի տանից, որտեղ մօտիկ մարդկանց շրջանում կարդացի իմ առաջին տպուած պատմուածքը։ Ինձ շատ էին գովում, և ես ախորժելի յուզմունքի մէջ՝ դանդաղ քայլում էի ամայի փողոցով՝ կեանքիս մէջ առաջին անգամ այդպէս լիուլի զգալով ապրելու հաճոյքը։

Փետրվար ամսին էր. պարզ գիշեր էր, և անամպ երկինքը խիտ աստղերով սփռուած՝ զուարթ ցրտութիւն էր շնչում երկրին, որ ծածկուած էր հէնց նոր եկած ձիւնի շքեղ զարդարանքով։ Ծառերի ճիւղերը ցանկապատից կախուելով, ձգում էին ճանապարհիս վրայ ստուերների հրաշալի նկարներ, պայծառ և զուարթ պսպղում էին ձիւնի բիւրեղները լուսնի կապտագոյն հեզ փայլի ներքոյ։ Ոչ մի տեղ չէր երևում կենդանի էակ, և ոտքերիս տակ ձիւնի ճռճռոցը միակ ձայնն էր, որ ընդհատում էր ինձ համար անմոռաց այդ պայծառ գիշերուայ խորհրդաւոր լռութիւնը... Ես մտածում էի.

—Լաւ է աշխարհիս վրայ մարդկանց մէջ մի բան լինելը։ Ու երևակայութիւնս՝ չնայելով պայծառ գոյներ, նկարում էր ապագան...

—Այո, դուք մի հրաշալի բան էք գրել... Այդ փաստ է,—մտախոհ կերպով ասաց մէկն յետևիցս։

Ես ցնցուեցի անակնկալութիւնից և շուրջս նայեցի։ Մուգ գոյն հագած մի փոքրիկ մարդ հասաւ ինձ և հաւասար քայլեց ինձ հետ՝ վարից վեր դէմքիս նայելով և ժպտալով։ Նրա ամեն ինչը սուր էր —հայեացքը, այտոսկրը, էսպանիոլկով ծնօտը. նրա փոքրիկ չորչրիկ կերպարանքն ամբողջովին աչք էր ծակում իր տարօրինակ ձևութեամբ. քայլում էր թեթև և, կարծես, անձայն, ասես՝ սահում էր ձիւնի վրայով։ Ես նրան չէի տեսել այնտեղ, ուր կարդում էի, և հասկանալի է, նրա ձայնից զարմացած էի։ Ո՞վ է սա և ո՞րտեղից։

—Դուք... նո՞յնպէս լսում էիք,—հարցրի ես։

—Այո, հաճոյք ունեցայ։

Նա խօսում էր տենօր ձայնով։ Նրա շրթունքները նուրբ էին. սև, փոքրիկ ընչացքը չէր ծածկում նրանց ժպիտը, որ չէր անհետանում և անախորժ տպաւորութիւն էր թողնում, որովհետև զգում էի, որ այդ ժպիտի տակ թաքնուած էր մի տեսակ կծու՝ ինձ համար աննպաստ միտք։ Սակայն ես այնչափ լաւ էի տրամադրուած, որ չէի կարող կանգ առնել ուղեկցիս այդ գիծը դիտելու, և իբր ստուեր սահելով աչքիցս, նա արագ անհետացաւ՝ իմ պայծառ ինքնագոհութեան տեղի տալով։ Ես գնում էի նրա հետ քովէ-քով և սպասում էի, թէ ինչ կասէ նա, ծածուկ յուսալով, որ նա կաւելացնի այն հաճելի լոպէների թիւը, որ ես վայելեցի այդ գիշեր։ Մարդս ագահ է, որովհետև ճակատագիրը շատ հազիւ է ժպտում նրան գգուանքով։

—Լաւ է իրան մի բացառիկ բան զգալը, չէ՞.—հարցրեց ուղեկիցս։

Նրա հարցի մէջ առանձին ոչինչ չնկատեցի և շտապեցի համաձայնել նրա հետ։

—Խէ-խէ-խէ,—կծու ծաղրով ծիծաղեց նա՝ նեարդոտ կերպով շփելով իր փոքրիկ ձեռքերը բարակ, կառչող մատներով։

—Դուք ուրախ մարդ էք եղել... սառնութեամբ ասացի ես՝ նրա ծիծաղից վիրաւորուած։

—Հա, ես ուրախ մարդ եմ,—ժպտալով հաստատեց նա և թափ տուեց գլուխը։—Մէկ էլ որ շատ հետաքրքիր եմ... մի՞շտ ուզում եմ գիտենալ. ամեն բան գիտենալ—այդ իմ մշտական ձգտումս է. և հէնց այդ է, որ իմ մէջ պահպանում է ժրութիւն և համարձակութիւն։ Ա՛յ, հէնց հիմա կամենում եմ իմանալ, ինչ արժէ ձեզ համար ձեր յաջողութիւնը։

Ես նրան նայեցի և ակամայ պատասխանեցի.

—Մի ամսի չափ աշխատել էի... կարելի է մի քիչ էլ աւելի...

—Ըհը՛,—արագ յարեց նա։—Մի քիչ աշխատանք, յետոյ կենսական փորձի մի մանրիկ, որ միշտ մի բան արժէ... Սակայն այնուամենայնիւ այդ թանկ չէ, երբ դուք այդ գնով ձեռք էք բերում այն գիտակցութիւնը, թէ ահա այս վայրկեանիս մի քանի հազար մարդ ապրում է ձեր մտքերով, ձեր երկը կարդալով։ Եւ ապա ծագում է յոյս, թէ կարելի է, ժամանակով... խէ, խէ... և երբ դուք մեռնիք... խէ, խէ, խէ...։ Այս բոլորի համար կարելի է աւելին տալ, աւելի՝ քան դուք մեզ տուիք—այնպէս չէ՞։

Նա դարձեալ ծիծաղեց իր քոքռան և խայթող ծիծաղով՝ խորամանկութեամբ ոտից գլուխ ինձ նայելով սուր, սև աչքերով։ Ես էլ նրան նայեցի վերից վար և վիրաւորուած՝ սառնութեամբ հարցրի նրան.

—Ներեցէք... Ո՞ւմ հետ հաճոյք ունիմ խօսելու։

—Ով եմ։ Չէ՞ք զուշակում։ Իսկ ես առ այժմ ձեզ

չեմ ասիլ, ով եմ... մի՞թէ ձեզ համար աւելի կարևոր է մարդու անունը գիտենալը, քան այն՝ թէ ինչ կասի նա։

—Ի հարկէ, ո՛չ...—պատասխանեցի ես.—բայց այս բոլորը տարօրինակ է...

Նա՝ չգիտեմ—ինչու՝ ձեռք տուեց վերարկուիս թևին և կամաց ծիծաղելով՝ ասաց.

—Էհ, թող լինի տարօրինակ, ինչո՞ւ մարդս երբեմն թոյլ չտայ իրան դուրս գալու սովորականի և առօրեայ շրջանակից... Եւ եթէ դուք հեռու չէք այդ անելուց—եկէք անկեղծօրէն խօսինք։ Երևակայեցէք, թէ ես ընթերցող եմ... մի տարօրինակ ընթերցող, որ շատ հետաքրքիր է և կըկամենար իմանալ, ինչո՞ւ համար և ի՞նչպէս պատրաստւում է գիրքը... օրինակ, ձերը։ Դէ՛հ, եկէք խօսենք։

—Օ, խնդրեմ...—ասացի ես։—Ինձ շատ հաճելի է... այսպիսի հանդիպումն և... խօսակցութիւն հնարաւոր է ոչ ամեն օր։—Բայց ես արդէն ստում էի, որովհետև ինձ համար այս բոլորը դառնում էր անհաճոյ։ Մտածում էի.—Ի՞նչ է ուզում սա. և ի՞նչ հիման վրայ ես ինձ թոյլ կտամ այս փողոցային հանդիպումին տալ մի տեսակ բանակռուի բնաւորութիւն։

Սակայն ես այնուամենայնիւ կամաց գնում էի նրա հետ և աշխատում էի դէմքիս վրայ արտայայտել սիրալիր ուշադրութիւն դէպի ուղեկիցս։ Այս բանը—յիշում եմ—դժուարութեամբ յաջողւում էր ինձ։ Բայց և այնպէս զուարթ տրամադրութիւն դեռ շատ ունէի. ես չէի կամենում վիրաւորել այս մարդուն՝ մերժելով խօսակցել նրա հետ. միայն վճռեցի զգոյշ լինել։

Մեր յետևից լուսինը փայլում էր երկնակամարի վրայ, և մեր ստուերներն ընկած էին ոտքերիս տակ։ Միանալով և մի խաւար բիր կազմելով՝ նրանք մայթի

վրայով սողում էին մեր առջևից. իսկ ես նայում էի նրանց և զգում էի, որ իմ մէջ ծագում էր մի բան, որը, ինչպէս այդ սողունները, խաւար էր, անըմբռնելի, և ինչպէս նրանք, նոյնպէս առջևս էր։

Ուղեկիցս բոպէաչափ լռեց և յետոյ խօսեց իր խոհերին տիրապետող մարդու ինքնավստահ եղանակով.

– Աշխարհիս վրայ ոչինչ աւելի կարևոր և հետաքրքրքիր չէ, քան մարդուս արարքների դրդիչը...Այնպէս չէ՞։

Ես գլխով արի։

—Դուք համաձայն էք... Ուրեմն եկէք անկեղծորէն խօսենք... անկեղծ խօսելու առիթը բաց մի թողնէք, քանի դեռ ջահել էք...

—Տարօրինակ մարդ է.—մտածեցի ես և նրա խօսքերով հետաքրքրուած՝ հարցրի նրան ծիծաղելով.

—Բայց այդ ի՞նչպէս... միանգամի՞ց։ Եւ ինչի՞ մասին խօսենք։

—Հապա ինչո՞ւ դանդաղ շարժուինք, երբ մի թռուիչքով կարելի է նպատակին հասնել.—աշխոյժ պատասխանեց նա՝ նայելով դէմքիս, և վաղեմի բարեկամի մտերմութեամբ բացականչեց.

—Խօսենք գրականութեան նպատակների մասին։

—Խնդրեմ... թէպէտ և, ինձ թւում է, արդէն ուշ է...

—Օ՜, ձեզ համար դեռ ուշ չէ...

Ես կանգ առայ՝ այդ խօսքերից զարմանալով.—նա արտասանեց այդ խօսքերն այնպիսի լուրջ համոզմունքով...և նրանք հնչում էին որպէս փոխարերութիւն։ Ես կանգ առայ՝ ցանկանալով մի բան հարցնել նրան, բայց նա ձեռքս բռնելով՝ կամացուկ և զօրով առաջ տարաւ, ասելով ինձ.

—Մի կանգնէք, որովհետև ինձ հետ դուք լաւ

ճանապարհի վրայ էք... Բաւական է այսքան յառաջաբանը։ Ասացէք—ի՞նչ է ուզում գրականութիւնը... դուք նրան ծառայում էք, պարտաւոր էք այդ գիտենալ։

Զարմանքս աճում էր ի հաշիւ ինքնատիրութեանս։ Ի՞նչ է ուզում այն մարդն ինձանից։ Ո՞վ է սա։

—Բարեկամ,—ասացի ես,—համաձայնեցէք, որ այս ամենը, որ կատարուում է մեր մէջ...

—Ունի բաւականաչափ հիմք,—հաւատացէք ինձ։ Զէ՞ որ աշխարհումս ոչինչ չէ կատարուում առանց բաւականաչափ հիմունքի... Ուրեմն գնանք արագ, բայց ոչ թէ առաջ, այլ խորը...

Անվիճելի է, որ այս խենթը հետաքրքրական էր, բայց նա ինձ բարկացնում էր։ Ես դարձեալ մի անհամբեր շարժում գործեցի դէպի առաջ. նա գալիս էր իմ յետևից և հանդարտ ասում էր ինձ.

—Ես ձեզ հասկանում եմ. ձեզ դժուար է այս վայրկեանիս որոշել այն նպատակը, որին հետևում է գրականութիւնը։ Ես կփորձեմ որոշել...

Նա հառաչեց և ապա ժպտերես նայեց դէմքիս։

—Դուք կհամաձայնէ՞ք ինձ հետ, եթէ ես ասեմ, որ գրականութեան նպատակն է—օգնել մարդուն ինքն իրան ճանաչելու, զօրացնել նրա հաւատը դէպի իր անձը և զարգացնել նրա մէջ ձգտումն դէպի ճշմարտութիւնը, մաքառել մարդկանց մէջ տիրող դատարկութեան դէմ, ունակութիւն ընձեռել նրանց մէջ լաւը գտնելու, զարթեցնել նրանց սրտի մէջ ամօթ, բարկութիւն, քաջութիւն, անել ամեն բան նրա համար, որ մարդիկ դատնային ազնիւ և զօրեղ և կարողանային ներշնչել իրանց կեանքին գեղեցկութեան նուրը ոգի։ Ահա իմ բանաձևը. սա, իհարկէ, լիակատար չէ, ձևական է... Լրացրէք սրան այն ամենով, որ կարող է ոգի ներշնչել

կեանքին, և ասացէք,—համամի՞տ էք ինձ։

—Այո՛, այդ այդպէս է... ասացի ես։— Մօտաւորապէս այդպէս է։ Ընդունուած է մտածել, որ ընդհանրապէս գրականութեան խնդիրն է ազնուացնել մարդուն...

—Ահա թէ ինչ մեծ գործի էք ծառայում դուք.— ազդուարար ասաց այս մարդը... և նորից ծիծաղեց նա իր կծու ծաղրով.—խէ, խէ խէ։

—Սակայն ինչո՞ւ համար էք ասում այս բոլորը.— հարցրի ես, այնպէս ձևացնելով՝ իբր թէ նրա ծիծաղն ինձ չի վիրաւորում։

—Հապա դուք ի՞նչ էք մտածում, ասացէք անկեղծ...

—Անկեղծ ասած՝...—սկսեցի ես՝ մտածելով մի կծու ծաղր, և լռեցի։ Ի՞նչ է նշանակում անկեղծ խօսել։ Այս մարդը յիմար չէ. նա պէտք է գիտենայ, թէ որքան նեղ են մարդուս անկեղծութեան սահմանները, և ինչպէս ամուր է պահպանում նրանց ինքնասիրութիւնը։ Նայելով ուղեկցիս երեսին, ես ինձ զգացի խորը խայթուած նրա ժպիտից—այնքան հեգնութիւն և կծու արհամարհանք կար նրանում։ Ես դարձեալ զգում էի, որ սկսում եմ մի բանից վախենալ և այդ երկիւղն ինձ ստիպում է հեռանալ նրանից։

—Ցտեսութիւն,—սառնութեամբ ասացի ես՝ գլխարկս վերցնելով։

—Ինչո՞ւ.—հանդարտ բացականչեց նա։

—Ես չեմ սիրում կատակը, երբ նրա մէջ չկայ վայելուչ չափ։

—Էհ, գնացէք... Այդ ձեր գործն է... Սակայն գիտէ՞ք, եթէ դուք այժմ հեռանաք ինձանից, մենք այլևս երբէք չենք հանդիպիլ։

ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академия Наук
СССР

«Երբէք» խօսքը նա շեշտեց, և նա հնչում էր իմ ականջին՝ ինչպէս թաղման զանգահարութիւն։ Ատում եմ այդ խօսքը և վախենում եմ նրանից. նա ինձ միշտ պատկերանում է ծանր և սառն, մուրճի պէս մի բան, որ ճակատագրով սահմանուած է մարդկանց յոյսերը փշրելու համար։ Այդ խօսքը կանգնացրեց ինձ.

—Ի՞նչ էք կամենում,—թախիծով և սրտնեղութեամբ հարցրի ես։

—Նստենք այստեղ,—նորից քմծիծաղ տալով՝ արտասանեց նա և ձեռքս պինդ բռնելով՝ ցած քաշեց։

Այդ վայրկեանին մենք քաղաքային պարտիզի ծառուղու վրայ էինք, ակացիաների և յասմիկների անշարժ և սառցապատ ճիւղերի մէջ։ Լուսնի լուսով լուսաւորուելով՝ նրանք կախուած էին օդի մէջ իմ գլխավերևը և, ինձ թւում էր, թէ սառուցով և եղեամով ծածկուած այդ պինդ ճիւղերը թափանցում են կուրծքս և հպում են սրտիս։

Ուղեկցիս արտասովոր վարմունքից շուարած և տարակուսած՝ ես նայում էի նրան և լռում։

—Սա հիւանդ է,—մտածեցի ես՝ կամենալով քաջալերել ինքս ինձ և բացատրել նրա արարքները։ Սակայն նա՝ չգիտեմ ինչպէս՝ գուշակեց իմ միտքս։

—Դու կարծում ես, որ ես առողջ չեմ։ Թող այդ։ Ի՞նչպիսի դատարկ և վտանգաւոր միտք։ Նրանով նախապաշարուելով՝ ինչպէս յաճախ հրաժարւում ենք մենք հասկանալ մարդուն միայն այն պատճառով, որ նա մեզանից ինքնուրոյն է, և այդ միտքն ինչպէս պինդ պահպանում և բարդացնում է մեր յարաբերութիւնների տխուր անփութութիւնը։

—Օ, այո՛,—ասացի ես, աւելի ու աւելի զօրեղ շփոթմունք զգալով այս մարդու առաջ։—Սակայն, նե-

60963.67
ՊԵՏ ԿԱՆ ՀՐ. ԴԱՐԲԻ
ГОС БИБЛИОТЕКА
ՀՍՍՌ-Арм ССР
им А. Мясникяна

ընեցէք, ես կգնամ... արդէն ժամանակ է։

—Գնա... սակայն խմացիր, որ դու շտապում ես քեզ կորցնելու... խէ, խէ,... նա բաց թողեց ձեռքս, և ես հեռացայ։

Նա մնաց պատուհանում, սարի վրայ, որ ծածկուած էր ձիւնի սպիտակ սաւանով և կտրատուած էր շաւիղների մոյգ երիզներով։ Նրա առաջ բացւում էր ընդարձակ տեսարան դեպի այն կողմը՝ անմռունչ տխրագին հարթավայրի վրայ։ Այն մարդը մնաց պատուհանում, նստաւ նստարաններից մէկի վրայ և սկսեց նայել դէպի ամայի հեռաստանը. իսկ ես գնում էի ծառուղու երկարութեամբ և զգում էի, որ նրանից չեմ հեռանալ. բայց և այնպէս գնում էի։ Գնում էի և մտածում.— կամաց, թէ արագ պէտք է գնամ, որ ցոյց տամ նրան, այնտեղ՝ յետևը նստած մարդուն, թէ որքան աննշան է նա ինձ համար։

Ահա նա կամացուկ շուացնում է մի ծանօթ բան...։ Ես գիտեմ, դա ծիծաղաշարժ տխուր մի երգ է կոյրի մասին, որ յանձն առաւ կոյրերի առաջնորդի դերը։ Ինչո՞ւ նա հէնց այդ երգն է շուացնում.—մտածեցի ես։

Եւ այստեղ ես հասկացայ, որ այն լոպէից, երբ հանդիպեցի այս փոքրիկ մարդուկին, ես մտայ բացառիկ և տարօրինակ զգացողութեան մթին շրջանը։ Իմ ոգու առաջուայ միապաղաղ և գոհ տրամադրութիւնը աքօղուեց մի կարևոր և ծանր ակնկալութեան մշուշով։

—«Ի՞նչպէս կլինիս առաջնորդ,
Երբ ուզին է անծանօթ».—

յիշում էի այն երգի բառերը, որ շուացնում էր մարդը։

Ես շուռ եկայ և նրան նայեցի։ Մէկ ձեռքով ծընկին յենած և գլուխն ափին դրած՝ նա նայում էր ինձ, շուացնում էր, և նրա սև ընչացքը շարժւում էր լուսնի

լուսով լուսաւորուած երեսին։ Մի ճակատագրական զգացմունքից դրդուած՝ վճռեցի յետ դառնալ։ Արագ մօտեցայ, նստեցի կողքին և ասացի նրան անվրդով՝ բայց ջերմագին.

—Բարեկամ, խօսենք պարզօրէն...

—Այդ անհրաժեշտ է մարդկանց համար,—գլխով արեց նա։

—Դուք, զգում եմ, մի տեսակ ոյժ ունիք ինձ վրայ ազդելու, և, պարզ է, ինձ բան ունիք ասելու. հա՞։

—Վերջապէս, դու քեզանում քաջութիւն գտար ինձ լսելու.—բացականչեց նա ծիծաղելով. բայց այժմ այդ ծիծաղը մեղմ էր, և մինչև իսկ, ինձ թուաց թէ ուրախութեան պէս մի բան լսեցի նրանում։

—Դէհ, խօսեցէք...—ասացի ես.—և եթէ կարող էք, խօսեցէք առանց տարօրինակութեան։

—Օ, շատ լաւ։ Բայց համաձայնիր, որ տարօրինակութիւնն անհրաժեշտ էր նրա համար, որ դէպի ինձ գրաւէի ուշադրութիւնդ։ Այժմ բթանում է մարդուս ուշադրութիւնը դէպի սովորականը և պարզը՝ իբրև չափազանց պաղ ու կոպիտ բան. այն ինչ ջերմացնել և նրբացնել մի բան մենք չենք կարող—ինքներս սառն ենք ու կոպիտ։ Մենք, թւում է, նորից կամենում ենք անուրջներ, գեղեցիկ մտացածին բաներ, ցնորք և տարօրինակութիւն. որովհետև մեր ստեղծած կեանքը թափուր է գոյներից, նսեմ է և ձանձրալի։ Իրականութիւնը, որ մենք երբեմն այնպէս տաք-տաք ուզում էինք բարեշրջել, ջախջախեց և տրորուեց մեզ... Ի՞նչ անենք։ Փորձենք, թերևս մտացածինը և երևակայութիւնը օգնեն մարդուս կարճ ժամանակով վեր ամբառնալ երկրիս երեսից և լաւ զննել նրա վրայ իր կորցրած տեղը։ Կորցրած, այնպէս չէ՞։ Չէ՞ որ մարդս այժմ երկրի թագաւորը չէ, այլ կեանքի սարուկը. կորցրեց նա իր ան-

դրանիկութեան պարծանքը՝ խոնարհուելով փաստերի առաջ. այնպէս չէ՞։ Իր ստեղծած փաստերից նա հանում է եզրակացութիւն և ասում է ինքն իրան. ահա անփոփոխ օրէնք։ Ու ենթարկուելով այդ օրէնքին, նա չի նկատում, որ արդեօք է դառնում իր՝ քանդելու և ստեղծելու իրաւունքի պաշտպանութեան համար վարած պայքարին։ Ասենք, նա այլ ևս չի էլ մաքառում, այլ միայն համակերպում է... Ինչո՞ւ համար մաքառէ։ Նրան ո՞վ է տուել այն իդէալները, որոնց համար նա անձնուիրութիւն ցոյց տար։ Ահա թէ ինչու կեանքն աղքատ է և տաղտկալի. ահա թէ ինչու մարդուս մէջ թուլացել է ստեղծագործող ոգին...։ Ոմանք կոյրզկուրայն որոնում են մի բան, որը մաքին թև տալով՝ վերականգնէր մարդուս հաւատը դէպի իր անձը։ Յաճախ գնում են ոչ այն կողմը, որտեղ է յաւիտենականը, մարդկանց միացնողը. որտեղ է Աստուած...։ Որոնք վրիպում են դէպի ճշմարտութիւնը տանող ճանապարհների մէջ,—կորչում են։ Թող կորչին, պէտք չէ նրանց խանգարել. չարժէ նրանց ափսոսալ—մարդ՝ շատ։ Կարևոր է ձգտումը՝ կարևոր է հոգու իղձը—գտնել Աստծուն. և եթէ կեանքի մէջ կլինեն հոգիներ՝ լի տենչանքով առ Աստուած, Նա կլինի նրանց հետ և կկենդանացնէ նրանց. որովհետև Նա անվերջ ձգտումն է դէպի կատարելութիւնը... Այդպէ՞ս է։

—Այո՛, ասացի ես.—այդ այդպէս է...

—Սակայն դու գիտես համաձայնել.—նկատեց խօսակիցս կծու քմծիծաղ տալով։ Յետոյ նա լռեց՝ հեռուն նայելով։ Ինձ թուաց թէ նա երկար է լռում, և ես անհամբեր ախ քաշեցի։ Այն ժամանակ նա ինձ չուղղելով իր հայեացքը, որ թափառում էր հեռուն, հարցրեց.

—Ո՞վ է քո Աստուածը։

Մինչև այս հարցը նա խօսում էր մեղմօրէն և քաղցրութեամբ, ու ինձ հաճելի էր նրան լսելը. ինչպէս բոլոր մտածող մարդիկ՝ նա մի քիչ տխուր էր, մտիկ էր իմ սրտին. ես նրան հասկանում էի, և իմ շփոթմունքս անհետանում էր։ Եւ ահա յանկարծ նա դնում է վճռական մի հարց, որին այնքան դժուար է պատասխանել մեր ժամանակի մարդուն, եթէ այդ մարդն ազնուաբար է վերաբերւում իրան։ Ո՞վ է իմ Աստուածը. երանի՜ թէ գիտենայի այդ։

Ես ընկճուած էի այդ մարդու հարցից. և ո՞վ իմ տեղը կպահպանէր հոգու սրբութիւն։ Իսկ նա նայում էր ինձ իր սուր աչքերով, շարունակ ժպտում էր և սպասում էր պատասխանիս։

—Դու լսում ես շատ երկար՝ իբրև մի մարդ, որ կարող էր ինձ պատասխան տալ։ Կարելի է, դու ասես ինձ որև է բան, եթէ ես քեզ հարցնեմ ահա թէ ինչ. դու գրում ես, և հազարաւոր մարդիկ կարդում են. ախր իսկապէս դու ի՞նչ ես քարոզում։ Եւ դու մտածե՞լ ես, թէ արդեօք դու իրաւունք ունի՞ս սովորեցնելու։

Կեանքիս մէջ առաջին անգամ այսպէս ուշիուշով նայում էի իմ խորքը։ Թող չմտածեն, թէ ես բարձրացնում կամ ստորացնում եմ ինձ նրա համար, որ մարդկանց ուշքը գրաւեմ դէպի ինձ,—աղքատից ողորմութիւն չեն խնդրել։ Ես գտայ ինձանում շատ բարի զգացմունքներ և իղձեր, շատ բան, որ սովորաբար կոչւում է լաւ, բայց այս բոլորը շաղկապող զգացմունք, կեանքի բոլոր երևոյթներն ամփոփող կարգաւորեալ և պայծառ միտք—ես չգտայ ինձանում։ Հոգուս խորքում շատ ատելութիւն կայ. նա շարունակ փտում է այնտեղ... երբեմն բռնկում է բարկութեան վառ կը-

բակով, բայց աւելի շատ կասկածներ կան այնտեղ։ Նրանք երբեմն այնպէս են ցնցում միտքս, այնպէս են ճնշում սիրտս, որ երկար ժամանակ ես լինում եմ ի ներքուստ խորտակուած... Ոչինչ չի դրդում ինձ ապրելու. սիրտս սառն է՝ ինչպէս մեռած. միտքս թմրում է. իսկ երևակայութիւնս ճնշում է մղձաւանջը (կօշմար)։ Եւ այսպէս, որպէս կոյր և յամբ՝ ապրում եմ ես երկար օրեր և գիշերներ՝ ոչինչ չցանկանալով, ոչինչ չհասկանալով. այն ժամանակ ինձ թւում է, որ ես արդէն եկակ եմ և միայն տարօրինակ թիւրիմացութեամբ դեռ ես թաղուած չեմ։ Այսպիսի գոյութեան սարսափն աւելի ևս սաստկանում է ապրելու անհրաժեշտութեան գիտակցութեամբ, որովհետև մահուան մէջ աւելի քիչ իմաստ կայ, աւելի շատ—խաւար... Հաւանական է, նա խլում է նոյն իսկ ուտելու հաճոյքը...

Ի՞նչ եմ քարոզում ես իսկապէս, ես—ինչպէս կամ։ Եւ ի՞նչ կարող եմ ասել մարդկանց։ Այն, ինչ որ արդէն վաղուց ասել են նրանց և միշտ ասում են. ինչ որ գտնում է լսողներ, բայց մարդկանց լաւ չի դարձնում։ Բայց իրաւունք ունի՞մ արդեօք քարոզելու այդ գաղափարները և մտքերը, երբ ինքս նրանցով դատիարակուած լինելով՝ յաճախ վարւում եմ ոչ այնպէս, ինչպէս նրանք թելադրում են։ Եթէ ես նրանց հակառակ եմ գնում, այս նշանակո՞ւմ է արդեօք, թէ նրանց ճշմարիտ լինելու գաղափարն է իմ անկեղծ համոզմունքը, որ իմ եսի հիմքն է կազմում։ Արդ, ի՞նչ պատասխանեմ, այս մարդուն, որ նստած է իմ կողքին։ Այնինչ նա արդէն յոգնեց պատասխանիս սպասելով և նորից խօսեց.

—Ես չէի դնիլ այս հարցերը, եթէ չտեսնէի, որ քո փառասիրութիւնը դեռ չէ կարողացել ոչնչացնել քո

պատիւը։ Դու քաջութիւն ունիս ինձ լսելու... դրանից եզրակացնում եմ, որ քո սէրը դէպի քո անձը խելացի է, որովհետև նրան զօրացնելու համար դու չես փախչում նոյն իսկ տանջանքից։ Դրա փոխարէն ես կըթեթևացնեմ քո դրութիւնն իմ առաջ և կխօսեմ քեզ հետ՝ իբրև զանցառուի, և ոչ յանցաւորի հետ։

—Մի ժամանակ մեր մէջ ապրում էին խօսքի մեծ վարպետներ, կեանքը և մարդկային հոգին ճանաչողներ, մարդիկ, որոնք ներշնչուած էին կեանքը բարեշրջելու անզուսպ ձգտումով, որոնք համակուած էին խոր հաւատով դէպի մարդը. Նրանք յօրինում էին գրքեր, որոնց երբէք չի մերձենալ մոռացութիւնը. որովհետև նրանց մէջ տպաւորուած են յաւիտենական ճշմարտութիւններ, նրանց էջերից բուրում է անթառամ գեղեցկութիւն։ Այդ գրքերի մէջ գծագրած տիպարները կենդանի են, որովհետև հոգի են առած ոգևորութեան ուժով. իսկ վարվողութեան օրինակները և կեանքի կանոնները կմնան յաւիտեանս անսասան։ Այդ գրքերի մէջ կայ և՛ արիութիւն, և՛ բորբոքուող բարկութիւն. նրանց մէջ հնչում է ազատ, անկեղծ սէրը, և ոչ մի աւելորդ բառ չկայ նրանց մէջ։ Գիտեմ, այնտեղից ես ստացել քո հոգու սնունդը...։ Բայց, երևի, հոգիդ վատ է սնընդուել, որովհետև քո խօսքերը ճշմարտութեան և սիրոյ մասին հնչում են կեղծ և շողոմ. կարծես, բռնանում ես քեզ վրայ, երբ խօսում ես այդ մասին։ Դու, ինչպէս լուսինը, ուրիշի լուսով ես լուսաւորում. քո լոյսը նսեմ, աղօտ է. նա շատ ստուեր է ծնում, սակայն թոյլ է լուսաւորում և ոչ ոքի չի ջերմացնում։ Մարդկանց, յիրաւի, արժէքաւոր մի բան տալու համար դու աղքատ ես. իսկ այն, ինչ որ դու տալիս ես, տալիս ես ոչ թէ մտքի և խօսքի գեղեցկութեամբ կեանքը հարստացնե-

լու վսեմ հաճոյքից, այլ աւելի քո գոյութեան պատահական փաստը մարդկանց անհրաժեշտ երևոյթների շարքը դասելու համար։ Դու տալիս ես նրա համար, որ աւելին ստանաս կեանքից և մարդկանցից։ Դու մուրացկան ես ընծայ տալու համար. դու ուղղակի վաշխառու ես—քո փորձառութեան փշրանքը տալիս ես դէպի քեզ եղած ուշադրութեան տոկոսով։ Գրիչդ անզօր փորփրում է իրականութիւնը, կամացուկ խառնղտում է կեանքի մանր երևոյթները և նկարագրելով սովորական մարդկանց առօրեայ զգայմունքները, դու բաց ես անում նրանց մտքի առաջ գուցէ և շատ ստոր ճշմարտութիւններ. բայց կարո՞ղ ես արդեօք նրանց համար ստեղծել թէկուզ մի փոքրիկ՝ հոգին վսեմացնող պատրանք... Ո՛չ։ Դու հաւատացած ես, որ օգտաւէտ բան է առօրեայ կեանքի տիղմը քքքրելը և նրանց մէջ ոչինչ չգտնելը, բացի տխուր աննշան ճշմարտութիւնները, որոնք հաստատում են միայն այն, թէ մարդս չար է, յիմար, պատուազուրկ, որ նա լիովին և միշտ կախուած է անթիւ արտաքին պայմաններից, որ նա անզօր է և ողորմելի, մենակ է և ինքն ըստ ինքեան։ Դիտես, դու թերևս արդէն կարողացել ես համոզել նրան այս բանում։ Որովհետև նրա հոգին պաղած է և միտքը բութ... Ո՞նց չէ։ Նա գրքերիդ մէջ տեսնում է իր պատկերը. իսկ գրքերը—մանաւանդ եթէ նրանք գրուած են այն համոզուած եղանակով, որն այնպէս յաճախ դուք տաղանդի տեղ էք դնում—միշտ որոշ չափով հիպնոսացնում է մարդուն։ Բո նկարագրի մէջ նա նայում է իր վրայ և տեսնելով՝ ինչքան վատթար է ինքը, չի գտնում աւելի լաւ լինելու հնարաւորութիւն։ Մի՞թէ դու կարող ես ցոյց տալ նրան այդ հնարաւորութիւնը։ Մի՞թէ դու կարող ես այս անել, երբ դու ինքդ... Բայց ես կմնայեմ քեզ նրա համար, որ դու ինձ լսելով,—զգում եմ—չես մտածում այն մասին, թէ ինչպէս ինձ հակաճառես և քեզ արդարացնես։ Այդպէ՞ս։ Որովհետև ուսուցիչը, եթէ նա ազնիւ է, միշտ պիտի լինի ուշադիր աշակերտ։ Դուք ամենքդ, կեանքի արդի ուսուցիչներ, աւելի շատ խլում էք մարդկանցից, քան թէ տալիս էք նրանց. որովհետև դուք շարունակ թերութիւնների մասին էք խօսում, միայն այդ էք տեսնում։ Սակայն մարդուս մէջ պէտք է որ լինի և արժանիք. չէ՞ որ ձեզանում կայ, իսկ դուք, դուք ինչով էք զանազանւում սովորական անգոյն մարդկանցից, որոնց նկարագրում էք այնպէս խստասիրտ և բծախնդիր կերպով՝ ձեզ համարելով առաքինութեան յաղթանակի քարոզիչներ, արատ մերկացնողներ։ Սակայն արդեօք դուք նկատո՞ւմ էք, որ առաքինութիւնն ու արատը՝ դրանց որոշելու համար գործ դրած ձեր ջանքերի շնորհիւ, լոկ խճճուած են, ինչպէս սև ու սպիտակ թելի երկու կծիկ, որոնք մերձաւորութիւնից դարձան թխագոյն, իրարից ընդունելով սկզբնական գոյնի մի մասը։ Եւ դժուար թէ Աստուած ձեզ ուղարկեց երկրիս վրայ... Նա կընտրէր աւելի կարող անձինք, քան դուք էք։ Նա կվառէր նրանց սիրտը դէպի կեանքը, ճշմարտութիւնը և մարդիկ տածած բուռն սիրոյ բոցով, և նրանք կայրուէին մեր գոյութեան խաւարի մէջ, ինչպէս Նրա զօրութեան և փառքի ճրագներ... Իսկ դուք ծուխ էք արձակում, ինչպէս սատանի յաղթանակի կերոններ, և ձեր ծուխը՝ թափանցելով մտքերը և հոգիները, թունաւորում է նրանց անվստահութեան թոյնով։ Ասա՛ ինչ էք սովորեցնում դուք։

Այսպիս վրայ զգում էի այս մարդու ջերմ շնչառութիւնը և չէի նայում նրա վրայ, վախենալով հան-

դիպել նրա հայեացքին։ Նրա խօսքերն ընկնում էին ուղեղիս՝ ինչպէս հրեղէն կաթիլներ, և դրանից ցաւ էի զգում... Ես սոսկալով հասկանում էի, որքան դժուար է պատասխանել այդ պարզ հարցերին... ու չպատասխանեցի նրան։

—Եւ այսպէս, ես, փութաջան ընթերցողս այն ամենի, որ գւում ես դու, և որ գրում են քեզպէսները, հարցնում եմ. ինչի՞ համար էք գրում դուք։ Եւ շատ էլ գրում էք... Մարդկանց սրտերի մէջ կամենում էք բարի զգացմունքնե՞ր զարթեցնել։ Սակայն սառն և անզօր խօսքերով դուք այդ չէք կարող անել. երբէք։ Եւ դուք ոչ միայն չէք կարող տալ կեանքին որևէ նոր բան, դուք եղածն էլ տալիս էք տրորուած, ճմլած և կերպարանքից զգած ձևով։ Ձեր երկերը կարդալով՝ մարդ ոչինչ չի սովորիլ, ոչընչից չի ամաչիլ, ձեր վոխարէն կամաչի։ Շարունակ առօրեայ երևոյթներ, հասարակ մարդիկ, առօրեայ մտքեր, եղելութիւններ...։ Հապա ե՞րբ պիտի խօսին խռոված ոգու մասին, ոգու վերածնութեան անհրաժեշտութեան մասին։ Ո՞ւր է հրաւէրը դէպի կեանքի ստեղծագործութիւնը, ո՞ւր են արիութեան դասերը, ո՞ւր են խոր խրոխտ խօսքերը, որոնք թև են տալիս հոգուն։

...—Դու կարող ես ինձ ասել, որ կեանքը չի տալիս ուրիշ տիպարներ, բացի նրանից, որոնց վերարտադրում ենք մենք։ Այդպէս մի՛ ասիր, որովհետև խօսքի վարպետ լինելու երջանկութիւնն ունեցող մարդուն ամօթ և նախատինք է խոստովանել իր անզօրութիւնը կեանքի առաջ և այն, որ նա չի կարող բարձր կանգնել նրանից։ Իսկ եթէ դու կեանքի հետ միևնոյն մակերևոյթի վրայ ես կանգնած, եթէ դու երևակայութեանդ ուժով չես կարողանում ստեղծել տիպարներ,

որոնք չըկան կեանքի մէջ, սակայն անհրաժեշտ են նրան խրատելու համար,—ի՞նչ շահ քո աշխատանքից, և ինչո՞վ կարդարացնես կոչումդ։ Մարդկանց ուշքն ու միտքը ծանրաբեռնելով աղքատ կեանքի լուսանկարչական վերարտադրութեան աղբով, մի մտածի՛ր, արդեօք մարդկանց չե՞ս վնասում։ Որովհետև, խոստովանի՛ր, դու չես կարողանում նկարագրել այնպէս, որ կեանքի քո տուած պատկերը մարդուս մէջ զարթեցնէր քինախնդիր ամօթանք և գոյութեան նոր ձևեր ստեղծելու այրող ցանկութիւն... Կարո՞ղ ես արագացնել կեանքի զարկերակը, կարո՞ղ ես նրան եռանդ ներշնչել, ինչպէս այդ անում էին ուրիշները։

Տարօրինակ խօսակիցս մի բոպէ կանգ առաւ. իսկ ես լուռ մտածում էի նրա խօսքերի մասին։

—Շուրջս տեսնում եմ շատ խելացի մարդիկ, բայց նրանց մէջ քիչ են ազնիւ մարդիկ, և եղածներն էլ ընկճուած են և հոգով հիւանդ։ Եւ չգիտեմ ինչու. միշտ այսպէս եմ տեսնում, որքան լաւ է մարդս, որքան անբիծ և ազնիւ է նրա հոգին, այնքան պակաս է նրա մէջ եռանդը, այնքան նա հիւանդոտ է, և այնքան ծանր է նրան ապրելը։ Միայնութիւն և թախիծ—ահա նրան վիճակը։ Սակայն որքան էլ շատ լինի նրանց մէջ լաւագոյնի տենչանքը, չկայ նրան ստեղծելու կարողութիւն։ Արդեօք նրա համար չե՞ն նրանք այդպէս ընկճուած և խղճալի, որ նրանց ժամանակին օգնութիւն չէ տրուած հոգին քաջալերող խօսքով...

—Եւ յետոյ—նորից խօսեց տարօրինակ զրուցակիցս,—կարո՞ղ ես զարթեցնել մարդու մէջ կենսալից ծիծաղ, որ թարմացնում է հոգին։ Տե՛ս, ախր մարդիկ բոլորովին մոռացել են կուշտ ծիծաղել։ Նրանք ծիծաղում են չարախնդութեամբ, ծիծաղում են ոտորու-

թեամբ, յաճախ ծիծաղում են արտասուելով, բայց երբէք չես լսիլ նրանց մէջ բերկրալից անկեղծ ծիծաղ, որ ցնցէր մեծերի կուրծքը. որովհետև լաւ ծիծաղը առողջացնում է հոգին... Մարդուս անհրաժեշտ է ծիծաղելը.—չէ որ ծիծաղը նրա սակաւաթիւ առաւելութիւններից մէկն է կենդանիների վերաբերմամբ: ԿաՀՈՂ ես զարթեցնել մարդկանց մէջ որևէ ուրիշ ծիծաղ, բացի նախատինքի ծիծաղը, բացի անկարգ ծիծաղը, որ ուղղուած է քեզ, որ ուղղուած է մարդուն, որ միայն նըրանով է ծիծաղելի, որ ողորմելի է: Հասկացիր, քո քարոզելու իրաւունքը պէտք է ունենայ բաւականաչափ հիմք՝ քո ընդունակութեան մէջ—մարդկանց մէջ անկեղծ զգացմունքներ զարթեցնել, որոնցով, ինչպէս մուրճերով՝ պէտք է ջախջախուին ու կործանուին կեանքի մի քանի ձևերը նրա համար, որ ստեղծուին ուրիշ աւելի ազատ ձևեր՝ կծկուածների փոխարէն: Բարկութիւն, ատելութիւն, արիութիւն, ամօթ, զղջանք և, վերջապէս, կատաղի յուսահատութիւն—ահա այն լծակները, որոնցով կարելի է ամեն ինչ քանդել երկրիս վրայ: ԿարՈՂ ես ստեղծել այդպիսի լծակներ: ԿարՈՂ ես նրանց շարժել: Ժողովրդին խօսելու իրաւունք ունենալու համար հարկաւոր է հոգու խորքում կրել կամ մեծ ատելութիւն դէպի նրա պակասութիւնները, կամ մեծ սէր դէպի նա՝ նրա տանջանքների համար: Իսկ եթէ հոգուդ մէջ չկան այդ զգացմունքները, համեստ եղիր և մի բան ասելուց առաջ շատ մի մտածիր...

Արդէն լոյսը բացւում էր, սակայն հոգուս մէջ աւելի ու աւելի թանձրանում էր խաւարը: Իսկ մարդը, որից իմ հոգին գաղանիք չունէր, հա խօսում էր: Երբեմն մոքովս անցնում էր.

—Արդեօք մարդ է սա.

Բայց նրա խօսքերից տարուած՝ ես չկարողացայ մտածել այդ հանելուկի մասին, և նորից նրա խօսքերն՝ ինչպէս ասեղ, ուղղղս էին խրւում:

—Սակայն և այնպէս կեանքն աճում է և լայնութեամբ ու խորութեամբ, թէպէտ և նա աճում է դանդաղ, որովհետև դուք ոյժ ու կարողութիւն չունիք նրա շարժումն արագացնելու: Աճում է կեանքը, և օր աւուր մարդիկ սովորում են հարցնել: Ո՞վ պէտք է պատասխան տայ նրանց: Դուք պէտք է տայիք, ինքնակոչ առաքեալներ: Սակայն այնքան հասկանում էք դուք կեանքը, որ բացատրէք ուրիշներին: Արդեօք հասկանում էք դուք ձեր ժամանակի պահանջները, նախազգում էք ապագան, և դուք ի՞նչ կարող էք ասել կեանքի վատթարութիւնից նեխուած՝ վհատուած մարդուն սթափեցնելու համար: Նա վհատուած է, նրա հետաքրքրութիւնը դէպի կեանքը սառ է. նրանում կարւում է արժանապատուութեամբ ապրելու ցանկութիւնը. նա պարզապէս ուզում է ապրել իբրև խուլ—լսում էք—նա արդէն լրբաբար ծիծաղում է, երբ արտասանում են իդէալ խօսքը. մարդս դառնում է մսով և հաստ կաշուով ծածկուած ոսկրների կոյտ. այդ գարշելի կոյտը շարժում է ոչ թէ ոգին, այլ տափանքը: Նա ուշադրութիւն է պահանջում—շո՛ւտ, օգնեցէք նրան ապրելու, քանի դեռ մարդ է: Բայց դուք ի՞նչ կարող էք անել նրանում կեանքի ծարաւ զարթեցնելու համար, երբ միայն հալումաշ էք լինում: հառաչում, ախ քաշում, կամ անտարբեր նկարագրում էք, ինչպէս նա լուծւում է: Կեանքի մթնոլորտում տիրում է քայքայման գարշահոտութիւն. երկչոտութիւնը, սարկութիւնը մնունդ է տալիս սրտին, ծուլութիւնը փափուկ կապանքներ է

դնում մոքին և ձեռքերին... Ի՞նչ էք մոցնում դուք այս գարշելի քաօսի մէջ։ Ո՜ւրքան չնչին էք դուք ամենքը դ, որքան ողորմելի և որքան շատ։ Օ՜, երանի՜ թէ յայտնուէր դաժան և սիրող մի մարդ՝ այրուած սրտով և հզօր, անհուն խելքով։ Ամօթաբեր լռութեան խեղդող մթնոլորտում կհնչէր մարգարէական խօսքը՝ ինչպէս զանգի հարուածը, և, կարելի է, ցնցուէին կենդանի մեռեալների անարժան հոգիները...

Այս խօսքերից յետոյ նա երկար լռեց։ Ես նրան չէի նայում։ Զեմ յիշում ինձանում ինչ էր աւելի—ամօթը, թէ՞ սարսափը։

—Ի՞նչ կարող ես անել ինձ։—հնչեց անտարբեր հարցը։

—Առայժմ—ոչինչ,—պատասխանեցի ես։

Ու դարձեալ լռութիւն։

—Իսկ ինչպէս պիտի ապրես դու այժմ։

—Չգիտեմ առայժմ...—պատասխանեցի ես։

—Ի՞նչ պիտի խօսես։

Ես լռեցի։

—Լռութիւնից բարձր իմաստութիւն չ'կայ։

Տաժանելի էր լռութիւնն այս խօսքերից յետոյ մինչև ծիծաղը, որ հնչեց ապա։ Նա ծիծաղում էր մեծ հաճոյքով, ինչպէս մի մարդ, որ վաղուց է առիթ չէր ունեցած այսպէս թեթև ախորժելի ծիծաղելու։ Սիրտս արիւն էր տալիս այդ անիծուած ծիծաղից։

—Խէ, խէ, խէ՜։ Եւ դու կեանքի ուսուցիչ ես։ Դու, որին այնպէս զիւրին է շփոթուելը։ Այժմ, կարծեմ, հասկացար՝ ով եմ ես. չէ՞. խէ, խէ, խէ՜... Եւ իւրաքանչիւրը ձեզանից՝ ձեր ծնած երիտասարդներից, հէնց այդպէս կշփոթուէր, եթէ կամենար ինձ հետ գործ ունենալ։ Միայն նա, ով պատել է իրանատութեան, լը-

բութեան և անամօթութեան զրահով, չի դողայ իմ խղճի դատաստանի առաջ... Ահա թէ որչափ զօրեղ ես դու. մի ցնցում—և դու ընկնում ես։ Ասա, դէհ ասա ինձ մի որ և է բան քեզ արդարացնելու համար։ Հերքիր, ինչ որ ասացի։ Ազատիր սիրտդ ամօթից և ցաւից։ Գոնէ մի բոպէ եղիր հզօր ու անձիդ վստահ, և ես յետ կառնեմ այն, ինչ որ երեսովդ տուի։ Ես քեզ կխոնարհիմ... Քո հոգու մէջ ցոյց տուր ինձ գէթ մի այնպիսի բան, որ օգնէր ինձ քեզ ուսուցիչ ճանաչել։ Ինձ հարկաւոր է ուսուցիչ, որովհետև ես մարդ եմ. ես մոլորուած եմ կեանքի խաւարի մէջ և ելք եմ փնտրում դէպի լոյս, դէպի ճշմարիտը, գեղեցիկը, դէպի նոր կեանք. ցոյց տուր ինձ ճանապարհը։ Ես մարդ եմ։ Ասիր ինձ, ծեծիր, բայց հանիր ինձ դէպի կեանքն ունեցած իմ անտարբերութեան տղմից։ Կամենում եմ աւելի լաւ լինել, քան եմ.—Ի՞նչ անեմ։ Սովորեցրու.

Ես մտածում էի. կարո՞ղ եմ, արդեօք, կարո՞ղ եմ բաւարարութիւն տալ այն պահանջներին, որ մարգը իրաւունքով յայտնում է ինձ։ Կեանքը հանգչում է, անթիւ կասկածներն աւելի ու աւելի պինդ պաշարում են մարդուս միտքը, և հարկաւոր է ելք գտնել։ Ո՞ւր է ճանապարհը։ Մի բան գիտեմ—երջանկութեան չէ հարկաւոր ձգտել. ինչի՞ համար է երջանկութիւնը։ Երջանկութեան մէջ չէ կեանքի իմաստը. և նրանից գոհ լինելով չի բաւականայ մարդս. նա այսպէս թէ այնպէս բարձր է դրանից։ Կեանքի իմաստը նպատակին ձգտելու գեղեցկութեան և զօրութեան մէջ է. և պէտք է գոյութեան ամեն մի վայրկեանը ունենայ իր բարձր նպատակը։ Այդ կարելի կլինէր... բայց ոչ կեանքի հին շրջանակների մէջ, ուր ամենքի համար այնպէս նեղ է, և ուր չկայ ազատութիւն մարդկային ոգուն...

Ու նա դարձեալ ծիծաղում էր, բայց արդէն հանդարտ, այնպիսի մարդու ծածաղով, որի սիրտը մաշուած է մտածմունքից։

—Ո՞րքան շատ մարդիկ են եկել—գնացել աշխարհիս վրայ, բայց որքան քիչ արձաններ են կանգնեցրած մարդկանց յիշատակին։ Այդ ինչ պատճառով։ Բայց նզովք անցեալին—նա չափազանց շատ նախանձ է զարթեցնում դէպի ինքը։ Որովհետև ներկայումս ամենքին չկան այնպիսի մարդիկ, որոնք մահուանից յետոյ թողնէին որ և է հետք երկրիս վրայ։ Թմրում է մարդը... և—ոչ ոք չի սթափեցնում նրան։ Թմրում է նա և—դառնում է անասուն։ Խարազան է հարկաւոր նրան և սիրոյ ջերմագին փաղաքշանք՝ խարազանի հարուածից յետոյ։Մի վախենար նրան ցաւեցնելուց. եթէ սիրելով հարուածես, նա կհասկանայ քո հարուածը և կընդունէ նրան՝ իբրև արժանի։ Իսկ երբ նա ցաւ զգայ և ամաչէ, ջերմաջերմ գուրգուրիր նրան—և նա կվերածնի... Մարդի՞կ։ Սրանք դեռ էլի երեխաներ են, թէպէտ և երբեմն սարսեցնում են մարդու իրանց չարագործութեամբ և մտքի այլանդակութեամբ։ Ու նրանք միշտ կարիք ունին սիրոյ և մշտական հոգացողութեան նրանց հոգու թարմ և առողջ անդի մասին...։ Իսկ դու մարդկանց սիրել գիտե՞ս։

—Մարդկանց սիրե՞լ,—հարցը կրկնեցի տարակուսանքով, որովհետև, ճշմարիտ, չգիտեմ, արդեօք սիրո՞ւմ եմ մարդկանց։ Պէտք է անկեղծ լինել—ես այդ չգիտեմ։ Ո՞վ կասի իր մասին.--Ահա ես սիրում եմ մարդկանց։ Մարդս, եթէ ուշիուշով հետևում է ինքն իրան, երկար կմտածէ այդ հարցի մասին, նախ քան վճռէ ասել - սիրում եմ։ Ամենքը գիտեն, որքան հեռու է մեզնից իւրաքանչիւրը իր մերձաւորից։

—Դու լռում ես։ Միևնոյն է—ես քեզ հասկանում եմ և լռելեայն... Ու գնում եմ...

—Արդէ՞ն.—կամաց հարցրի ես։ Որովհետև որքան էլ նա ինձ համար սարսափելի էր, ես ինքս ինձ համար աւելի սարսափելի էի...

—Այո, գնում եմ... Դեռ շատ անգամ ես կգամ քեզ մօտ։ Սպասի՞ր։

Եւ նա գնաց։

Ի՞նչպէս գնաց։ Ես այդ չնկատեցի։ Նա արագ և անձայն գնաց, ինչպէս անհետանում են ստուերները... Իսկ ես դեռ երկար մնացի պարտիզում՝ նստարանի վրայ՝—դրսից ցուրտ չզգալով և չնկատելով, որ արդէն արևը ծագեց և նրա ճառագայթները պայծառ փայլում են ծառերի սառոյց կտրած ճիւղերի վրայ։ Ինձ տարօրինակ էր թւում տեսնել պայծառ օրը և արևը, որ փայլում էր անտարբեր, ինչպէս միշտ, և այս ծեր բազմաչաբչար երկիրը, որ հագած էր արևի ճառագայթների տակ շլացուցիչ կերպով պէծին տուող ձիւնի ծածկոյթը...

1898

ՏԱՓԱՍՏԱՆՈՒՄ.

...Պերեկօպից դուրս եկանք ամենավատ տրամադրութեան տակ—գայլի պէս քաղցած և ողջ աշխարհի դէմ չարացած։ Ամբողջ օրն ի զուր գործ դրինք մեր բոլոր շնորհքն ու ջանքերը, որ մի բան գողանայինք կամ վաստակէինք. և երբ, վերջապէս, համոզուեցինք, որ ոչ այս և ոչ այն չի յաջողւում, վճռեցինք գնալ հեռու։ Ո՞ւր։ Առհասարակ—հեռու։

Մենք պատրաստ էինք ամեն տեսակէտից հեռուն գնալ կեանքի այն շաւիղով, որ վաղուց արդէն մեզ վիճակուած էր,—մեզանից ամեն մէկը լռելեայն այսպէս էր որոշել և այդ պարզ արտայայտւում էր մեր նուաղած աչքերի մռայլ փայլով։

Երեք հոգի էինք. քիչ առաջ ծանօթացանք, երբ իրար հանդիպեցինք Խերսօն քաղաքում՝ Դնեպրի ափին գտնուող մի գինետան մէջ։

Մեզանից մէկը երկաթուղային բատալիօնի զինուոր էր եղել, իսկ յետոյ՝ իբր թէ Լեհաստանի ճանապարհներից մէկի վրայ վարպետ. շիկակարմիր մազերով, պինդ մկաններով մի մարդ էր՝ պաղած մոխրագոյն աչքերով. գերամաներէն խօսել գիտէր և շատ լաւ տեղեակ էր բանտային կեանքին։

Մեր կարգի մարդիկ չեն սիրում իրանց անցեալի

մասին շատ խօսել, և դրա համար միշտ ունեն աւելի կամ պակաս հիմնաւոր պատճառ. ուստի և մենք հաւատում էինք իրար.—գոնէ արտաքուստ հաւատում էինք, որովհետև ներքուստ մեզանից ամեն մէկը հէնց իրեն չէր հաւատում։

Երբ մեր երկրորդ ընկերը, որ մի չորչրիկ ու փոքրիկ մարդուկ էր՝ նուրբ և միշտ սկեպտիկաբար ծալած շրթունքներով, իր մասին ասում էր, որ ինքը Մոսկվայի համալսարանի նախկին ուսանող էր,—ես և զինուորն այդ ընդունում էինք իբրև իրողութիւն։ Իսկապէս մեզ համար բոլորովին միևնոյն էր, ուսանող էր եղել նա երբեմն, խուզարկու ոստիկան, թէ՞ գող,—էականն այն էր միայն, որ մեր ծանօթութեան բոպէին նա մեզ հաւասար էր,—քաղցած էր, քաղաքներում ոստիկանութեան առանձին ուշադրութեան՝ իսկ գիւղերում շինականների կասկածաւոր վերաբերմունքի առարկայ էր, ատելով ատում էր և՛ ոստիկաններին, և՛ գիւղացիներին հալածուած և քաղցած գազանի անզօր ատելութեամբ, երազում էր մի համաշխարհային վրէժխնդրութիւն ամենքից և ամեն բանից—մի խօսքով, և՛ բնութեան թագաւորների, և՛ կեանքի վեհապետների մէջ բռնած իր դիրքով. և՛ իր տրամադրութեամբ—մեզանից էր. մէկ սանրի կտաւ էինք։

Երրորդը ես էի։ Մանկութիւնից ինձ յատուկ համեստութիւնից զրկուած՝ ոչ մի խօսք չեմ ասել իմ արժանիքների մասին և, չկամենալով պարզամիտ երևալ, չեմ խօսիլ պակասութիւնների մասին։ Սակայն, կուզէք, իբրև իմ բնաւորութեան նկարագրութեան նիւթ՝ կասեմ, որ միշտ ես ինձ ուրիշներից լաւ եմ համարել և այժմ այդպէս էլ համարում եմ։

Եւ այսպէս մենք դուրս եկանք Պերեկօպից և գնում

էինք՝ այդ օրուայ համար յոյս դնելով չօրանների վրայ, որոնցից մի՞շտ կարելի է հաց խնդրել, և որոնք, շատ սակաւ է պատահում, որ մերժեն անցորդներին։

Ես գնում էի զինուորի հետ. «ուսանողը» քայլում էր մեր յետևից։ Նրա ուսից կախուած էր պիջակ յիշեցնող մի բան. սրածայր, անճոռնի և տակից խուզած գլուխը ծածկած էր լայնեզր գլխարկի մնացորդով։ Գոյնզգոյն կարկատաններով ծածկուած մոխրագոյն անդրավարտիքը պատում էր նրա բարակ ոտիկները, իսկ նրբաններին յարմարացրել էր իր հագուստի աստառից ոլորած կապերով՝ ճանապարհին գտած կօշիկի ճիտքը, որ նա անուանեց սանդալներ, ու քայլում էր՝ շատ փոշի բարձրացնելով և կանաչաւուն փոքրիկ աչիկները պսպղացնելով։ Զինուորը հագել էր կումաչի կարմիր շապիկ, որ իր ասելով, նա անձամբ ձեռք էր բերել Խերսօնում. շապկի վրայից կար մի տաք բամբկուն ժիլետ ևս. գլխին դրել էր անորոշ գոյնի զինուորական գլխարկ՝ զինուորական կանոնի համաձայն «վերջին շրջանակը ծալած աջ կողմի վրայ»։ Ոտների վրայ այս ու այն կողմն էր ճօճւում չումակի լայն անդրաւարտիքը։ Նա բոբիկ էր։

Ես էլ հագնուած և բոբիկ էի։

Մենք գնում էինք. իսկ մեր շուրջը հսկայական թափով ամեն կողմ փռուած էր տափաստանը, ինչպէս մի ահագին սև պնակ, և ծածկուած էր ամարային անամպ երկնքի կիզիչ գմբեթով։ Տժգոյն, փոշոտ ճանապարհը կտրում էր նրան լայն շերտով և այրում էր մեր ոտքերը։ Տեղ-տեղ պատահում էին խոզաններ, որոնք տարօրինակ նմանութիւն ունէին զինուորի վաղուց չածիլած այտերին։

Զինուորը գնում էր և խռպոտ բասով երգում.

...—Եւ զուրբ զյարութիւնդ Քո փառաւորեմք...

Ծառայութեան ժամանակ բատալիոնի եկեղեցում նա կատարում էր սարկաւագի պաշտօնի պէս մի բան և գիտէր անթիւ ու անհամար տաղեր, սկսուածքներ և օրհներգներ, և իր այդ գիտութիւնն ի չարն էր գործ դնում ամեն անգամ, երբ մեր խօսակցութիւնը որևէ պատճառով իրար չէր բռնում։

Առջևը, հորիզոնի վրայ հետզհետէ երևում էին նուրբ գծագրութեամբ ձևեր հաճելի գոյներով՝ բաց մանիշակագոյնից սկսած մինչև նուրբ վարդագոյնը։

—Անշուշտ, Խրիմի սարերը հէնց սրանք են,—ասաց «ուսանողը» սառնութեամբ։

—Սարե՞ր,—բացականչեց զինուորը,—շատ շուտ տեսար սարերը, բարեկամ։ Դրանք ամպեր են... ուղղակի ամպեր։ Նայի՛ր ինչ տեսակ են—ասես՝ հապալասու թթուաշ լինեն կաթով պատրաստած։

Ես նկատեցի, որ շատ լաւ բան կլինէր, եթէ ամպերն իսկապէս թթուաշից բաղկացած լինէին։ Այս անմիջապէս գրգռեց մեր քաղցը—մեր օրուայ չարիքը։

—Ա՛խ, սատանայ,—հայհոյեց զինուորը թքելով,—գոնէ մարդու երես տեսնէինք։ Ոչո՞ք չկայ... էլ ճար չկայ, պէտք է թաթերս ծծենք, ինչպէս արջը ձմեռը...

—Ես ասում էի, որ հարկաւոր է շէն տեղերով գնալ,—խրատական եղանակով յայտնեց «ուսանողը»։

—Ասում էի՞ր,—վրդովուեց զինուորը։—Դէհ, էլ ի՞նչ ուսումնական ես, որ չասես։ Ի՞նչ շէն տեղ։ Սատանան գիտէ, որտեղ են նրանք։

«Ուսանողը» լռեց շրթունքները ծալելով։ Արևը մայր էր մտնում, և հորիզոնի վրայ ամպերը խաղում էին զանազան աննկարագրելի գոյներով։ Դաղի և աղի հոտ էր գալիս։

Եւ այդ չոր ու դուրեկան հոտից մեր ախորժակն աւելի գրգռւում էր։

Մի բան ծծում էր ստամոքսը։ Դա մի տարօրինակ և անախորժ զգայութիւն էր. թւում էր թէ հիւթերը մարմնի բոլոր մկաններից հետզհետէ գնում են ուր որ է, գոլորշիանում են, և մկանները կորցնում են իրանց կենդանի ճկունութիւնը։ Մի ծածկող զօրութիւն տիրում էր բերանի խոռոչը և կոկորդը. գլուխը շշմում էր. իսկ աչքերի առաջ հա գալիս-գնում էին խաւար բծեր, որոնք երբեմն մսի ծխացող կտորների, կլոր հացի կերպարանք էին ստանում. յիշողութիւնը այդ «անցեալի տեսիլներին, յամր տեսիլներին» տալիս էր համապատասխան հոտ, և այն ժամանակ ստամոքսի մէջ, կարծես, դանակ էր շարժւում։

Բայց և այնպէս մենք գնում էինք իրար հաղորդելով մեր զգայութիւնների նկարագիրը, ուշիուշով նայում էինք չորս կողմը—արդեօք որ և է տեղ հօտ չի՞ երևում, և ականջ գնում—չի՞ լսում արդեօք Արմենակի բաղարը մրգեղէն տանող թաթարի արաբայի ճռնչիւնը։

Սակայն պատասխանը ամայի և անմռունչ էր։

Նախնթաց օրը մենք երեքով կերանք չորս գրուանքայ հաճարի հաց և հինգ ձմերուկ, այնինչ մօտ քառասուն վերստ ճանապարհ կտրեցինք—մուտքին անհամապատասխան եղք—և Պերեկօպի շուկայի հրապարակի վրայ քնելով՝ քաղցածութիւնից զարթնեցինք։

«Ուսանողը» իրաւացի կերպով մեզ խորհուրդ չէր տալիս պառկել քնելու, այլ առաջարկում էր գիշերուայ ընթացքում զբաղուել... սակայն կանոնաւոր հասարակութեան մէջ ընդունուած չէ լսելի ձայնով խօսել սեփականութեան իրաւունքը խախտելու ծրագրների մասին, ուստի և ես լռում եմ։ Ես կամենում եմ լինել մի այն շիտակ, և ինձ շահ չկայ կոպիտ լենելուց։ Ես գիտեմ, որ մարդիկ մեր բարձր քաղաքակիրթ օրերում սրտով աւելի ու աւելի փափուկ են դառնում և մինչև անգամ՝ երբ բռնում են իրանց մերձաւորի կոկորդը՝ նրան խեղդելու դիտաւորութեամբ,—այդ ժամանակ էլ աշխատում են այդ անել ըստ կարելոյն սիրալիր կերպով և պահպանելով վայելչութեան բոլոր կանոնները, որոնք այս դէպքում տեղի են։ Իմ կոկորդիս վրայ աբած փորձը հարկադրում է ինձ մատնանիշ անել բարքերի այս յառաջադիմութեան վրայ, և ես վստահութեան հաճելի զգացմունքով հաստատում եմ, որ այս աշխարհում ամեն բան զարգանում և կատարելագործւում է։ Այս նշանաւոր երևոյթը մասնաւորապէս անհերքելի կերպով հաստատւում է տարէց-տարի աճող բանտերով, գինետներով և անառականոցներով...

Այսպէս ուրեմն, շարունակ թուք կուլ տալով և բարեկամական խօսակցութեան մէջ աշխատելով խեղդել ստամոքսի տագնապը, մենք գնում էինք ամայի և անմռունչ դաշտի միջով, գնում էինք վերջալոյսի ոսկեզօծ ճառագայթների ներքոյ՝ լի աղօտ յուսով։ Արևը մայր էր մտնում՝ կամաց լիշնելով իր ճառագայթներով առատապէս գունաւորուած ամպերի մէջ. իսկ մեր յետևից և կողքերից կապտագոյն աղջամուղջը՝ հետզհետէ տափաստանից երկինք բարձրանալով՝ փոքրացնում էր մեզ շրջապատող անհամբոյր հորիզոնը։

—Տղերք, խարոյկի համար վառելիք ժողովեցէք. —ասաց զինուորը՝ ճանապարհից մի կոճղ վերցնելով։ Հարկ կլինի բացօդեայ գիշերել... շաղ է։ Աթար, ցախ ու մախ—բոլորը վերցրէք։

Մենք ցրուեցինք ճանապարհի շուրջը և սկսեցինք

հաւաքել չոր ցախ և ամեն բան, որ կվառուի։ Ամեն անգամ, երբ հարկաւոր էր լինում կռանալ, բուռն ցանկութիւն էր զարթնում հէնց տեղն ու տեղը գետին ընկնել, անշարժ պառկել և հող ուտել. ուտել սև հիւթալի հողը, շատ ուտել, ուտել մինչև ոյժից ընկնելը և յետոյ քնել, թէկուզ յաւիտեանս քնել, միայն թէ ուտել, ծամել և զգալ, թէ ինչպէս տաք և թանձր շաղախը բերանից կամաց իջնում է կծկուած որկորի միջով քաղցից տոչորուած, կծկուած ստամոքսը, որ մի բան ծծելու ցանկութիւնից այրւում է։

—Գոնէ արմտիք գտնէիք...—հառաչեց զինուորը, —կան տեսակ-տեսակ ուտուող արմտիք...

Բայց հերկած սահողի մէջ արմտիք չկար։ Արագ վրայ էր հասնում հարաւային գիշերը, և դեռ չէր հանգել արևի վերջին շողը, որ արդէն մոյգ կապտագոյն երկնակամարի վրայ փայլեցին աստղերը. իսկ մեր շուրջը աւելի ու աւելի թանձրանում էր խաւարը և փոքրացնում տափաստանի անսահման տարածութիւնը...

—Տղէրք,—կամաց ասաց «ուսանողը»,—այնտեղ՝ ձախ կողմը մարդ է պառկած...

—Մարդ.—կասկածեց զինուորը։—Ինչո՞ւ պիտի այնտեղ պառկած լինի։

——Գնա՛ հարցրու։ Հաւանական է որ նա հաց ունենայ, քանի որ իջել է դաշտի մէջ.—բացատրեց «ուսանողը»։ Զինուորը նայեց այն կողմը, որտեղ պառկած էր մարդը՝ վճռողարար թքելով ասաց.

—Գնանք նրա մօտ։

Միայն «ուսանողի» կանաչաւուն և սրատես աչքերը կարող էին որոշել, որ ճանապարհից յիսուն սաժէն դէպի ձախ երևացող սև դէզը մարդ է։ Մենք գընում էինք դէպի նա՝ արագ քայլելով ցելի կոշտերի վրայով, և զգում էինք, թէ ինչպէս կերակրի նոր ծագած յոյսը սաստկացնում էր քաղցի ցաւերը։ Մենք արդէն մօտեցել էինք—մարդը տեղից չէր շարժւում։

—Կարելի է, մարդ չէ,—մռայլ կերպով արտայայտեց զինուորը մեր մտածմունքը։

Սակայն մեր կասկածը հէնց նոյն վայրկեանին փարատուեց. որովհետև յանկարծ դէզը գետնի վրայ շարժուեց, բարձրացաւ, և մենք տեսանք, որ դա իսկապէս կենդանի մարդ է, որ չոգած էր ծնկների վրայ և մեզ էր պարզել ձեռքը։

Ու նա ասում էր մեզ խուլ դողդողացող ձայնով.

—Զմօտենաք—կսպանեմ։

Խաւար օդի մէջ հնչեց չոր և կարճ չխկոց։

Մենք իսկոյն կանգ առանք և մի քանի վայրկեան լուռ էինք՝ շուարած այս չար հանդիպումից։

—Այ գարշելի մարդ,—շեշտով փնթփնթաց զինուորը։

—Հա—մտախոհ ասաց «ուսանողը».—ատրճանակով է ման գալիս... երևի... իւղալի է...

—Է՜յ,—լղաւեց զինուորը՝ անշուշտ ինքն իրան մի բան վճռելով.

Մարդը առանց դիրքը փոխելու՝ լուռ էր։

—Է՜յ, դո՛ւ. քեզ ձեռք չենք տալ... միայն հաց տուր մեզ... կունենաս, չէ՞։ Տո՛ւր, եղբայր, ի սէր Քրիստոսի... Նզովեա՛լ, անիծուա՛ծ դու։

Վերջին խօսքերն զինուորն արտասանեց քթի տակ։

Մարդը լուռ էր։

—Լսո՞ւմ ես,—սրտի չարութիւնից և յուսահատութիւնից նորից խօսեց զինուորը. — հա՛ց տուր, հա՛ց։ Մենք քեզ չենք մօտենալ... այդ տեղից գցի՛ր...

—Լա՛ւ...—կարճ կտրեց մարդը։

Նա կարող էր մեզ ասել—«Իմ անգին եղբայր-

նեբս» և եթէ ներշնչէր այդ երեք քրիստոնէական բառերին ամենասուրբ և ամենավսեմ զգացմունք, նրանք մեզ այնքան չէին յուզիլ, այնքան չէին մարդացնիլ, որքան այդ յամբ և հակիրճ խօսքը.

—Լա՛ւ։

—Բարի մարդ, մեզանից մի՛ վախենար,—խօսեց զինուորը մեղմաբար, քաղցր ժպիտն երեսին, թէպէտ և մարդը չէր կարող տեսնել նրա ժպիտը, որովհետև նա մեզանից հեռու էր առնուազը քսան քայլ։

—Մենք խաղաղ մարդիկ ենք... Ռուսաստանից Կուբան ենք գնում... Ճանապարհին փողի նեղութիւն ունեցանք, եղած-չեղածը կերանք... իսկ հիմայ, ահա երկու օր է, ոչինչ չենք կերել...

—Բռնի՛ր,—ասաց բարի մարդը՝ օդի մէջ թիւը թափ տալով։ Սև գունդը թռաւ-ընկաւ մեզանից ոչ հեռու՝ վարելահողի վրայ։ «Ուսանողը» վրայ հասաւ։

—Բռնի՛ր, էլի բռնի՛ր, էլ չկայ...

Երբ «ուսանողը» ժողովեց այս տարօրինակ ողորմութիւնը, դուրս եկաւ, որ մենք ունենք մօտ չորս դրուանքայ չոր հաց, որ կեղտոտուած էր հողի մէջ և շատ քարթու էր։ Չոր հացը աւելի կուշտ կպահէ, քան կակուղը. նրա մէջ թացութիւն չկայ։

—Ա՛յ, էս քեզ... էդ ինձ... էս էլ նրան.—ուշքն ու միտքը կեղրոնացրած բաժանում էր զինուորը հացի կտորները։—Կա՛ց, հաւասար չեղաւ։ Բռնից, ուսումնակա՛ն, պէտք է պոկել մի կտոր, թէ չէ նրանը քիչ է...

«Ուսանողը» առանց հակաճառութեան հաշտուեց կորցնել իր բաժնից հինգ մսխալի չափ մի կտոր. ես ստացայ այդ կտորը և դրի բերանս։

Ու սկսեցի ծամել, կամաց ծամել, հազիւ զսպելով ջղաձգաբար շարժուող ծնօտներս, որոնք պատրաստ

էին փշրել նոյն իսկ քարը։ Ինձ մեծ հաճոյք էր պատճառում զգալ որկորիս ջղային ցնցումները և քիչ-քիչ բաւարարութիւն տալ նրան։ Տաք և անբացատրելի, աննկարագրելի համեղ հացը՝ պատառ պատառի յետևից իջնում էր ստամոքսը և, թւում էր, իսկոյն դառնում էր արիւն և ուղեղ։ Որչափ լցւում էր ստամոքսս, նոյնչափ բերկրութիւնը, տարօրինակ, խաղաղ և կենդանացնող բերկրութիւնը տիրում էր սրտիս, և իմ ընդհանուր վիճակս նման էր մի տեսակ թմրութեան։ Մոռացայ պարբերական քաղցի այդ անիծած օրերը, մոռացայ ընկերներիս, երբ ամբողջովին ամփոփուած էի իմ կրած հաճելի զգայութիւնների մէջ։

Սակայն երբ ափիս վրայից հացի վերջին փշրանքները բերանս նետեցի, զգացի, որ դեռ մահու չափ քաղցած եմ։

—Այն անիծածի մօտ խոզի իւղ կամ միս էլ մնացած կլինի...—փնթփնթում էր զինուորը՝ դէմ ու դէմս գետնի վրայ նստելով և ձեռքերով փորը շփելով։

—Հաւանական է, որովհետև հացից մսի հոտ էր գալիս... Դէհ, երևի, հաց էլի կունենայ...—ասաց «ուսանողը» և կամաց աւելացրեց.

—Ա՛յ թէ ատրճանակը չէր լինիլ...

—Տեսնես ո՞վ է։

—Երևի՛, մատաղացու է...

—Շուն,—կտրուկ շեշտով որոշեց զինուորը։

Մենք նստած էինք իրար մօտ և խէթ-խէթ նայում էինք այն կողմը, որտեղ նստած էր մեր բարեբարն իր ատրճանակով։ Այնտեղից մեզ չէր հասնում ոչ ձայն, ոչ կենդանութեան նշան։

Մեր շուրջը գիշերը թանձրացնում էր խաւարը։ Տափաստանում մեռելատիպ խաղաղութիւն էր տիրում

—մենք լսում էինք մեր շնչառութեան ձայնը։ Երբեմն ուր որ է հնչում էր սիրիրիական մկան ծուծուցը...Աստղերը, երկնքի կենդանի ծաղիկները՝ այլուում էին վերևը... Մենք ուտել էինք ուղում։

Հպարտութեամբ կասեմ—այդ բաւականին տարօրինակ գիշերը ես իմ պատահական ընկերներից ոչ լաւ էի, ոչ վատ։ Առաջարկեցի վեր կենալ և գնալ այդ մարդու վրայ։ Նրան ձեռք տալ պէտք չէ. մենք միայն կուտենք բոլորը, ինչ որ կգտնենք։ Նա պիտի ատրճանակ բռնայ—թող բռնայ։ Եթէ յաջողուի, երեքիս մէկին պիտի հարուածէ։ Եթէ նոյնիսկ հարուածէ, ատրճանակի գնդակը հազիւ թէ մահացու լինի։

—Գնանք,—ասաց զինուորը վեր ցատկելով։

«Ուսանողը» նրանից դանդաղ վեր ելաւ։

Եւ մենք գնացինք, համարեա վազեցինք։ «Ուսանողը» մեր յետևից էր գալիս։

—Բարեկամ,—յանդիմանական շեշտով կանչեց զինուորը։ Մեր ականջին հասաւ նրա խուլ մրթմրթոցը և ատրճանակի ոռքի չոր չխկոցը։ Եւ ահա փայլեց բոցը, հնչեց ատրճանակի սուր պայթիւնը։

—Մօտովս անցաւ,—խնդութեամբ բացականչեց զինուորը՝ մի թռիչքով մարդուն հասնելով։—Ա՛յ դու սատանայ, ես քեզ հիմայ ցոյց կտամ...

«Ուսանողը» պարկին վրայ հասաւ։

Իսկ սատանան մէջքին ընկաւ և ձեռքերը թափ տալով՝ խռխռացնում էր...

—Այս ի՞նչ բան է,—զարմացաւ զինուորը, որ արդէն բարձրացրել էր ոռքը, որ այդ մարդուն քացի տար։—Զլխի՞ թէ ինքն իրան խփեց։ Է՛յ դու, ի՞նչ եղաւ։ Քեզ դիպաւ, ինչ է։

—Միս էլ, մի տեսակ կարկանդակ էլ, հաց էլ—

շատ, տղերք.—հնչեց «ուսանողի» հրճուող ձայնը։

—Է՛հ, գլուխդ քարը։ Գնա սատկիր... Դէհ, ուտենք, տղերք ջան,— գոռաց զինուորը։ Ես մարդու ձեռքից ատրճանակն առայ. նա էլ չէր խռխռացնում և այժմ անշարժ պառկած էր։ Ատրճանակի մէջ մի փամփուշտ էլ կար։

Մենք նորից սկսեցինք. ուտում էինք լուռ։ Մարդը դեռ պառկած էր լուռ և անշարժ։ Նրա վրայ ուշք չէինք դարձնում։

—Մի՞թէ միայն հացի համար էր այս բոլորը, եղբայրնե՛ր,—յանկարծ լսուեց նրա խռպոտ ու կերկեր ձայնը։

Մենք ցնցուեցինք։ «Ուսանողը» մինչև իսկ խեղդուուեց և դէպի դեռին կռանալով՝ սկսեց հազալ։

Զինուորը պատառը ծամելուց յետոյ սկսեց հայհոյել։

—Շան ծնունդ, այ տրաքուիս դու չոր կոճղի նըման։ Կաշիդ պիտի քերթէ՞ինք, ի՞նչ է։ Ինչնե՞ր էր պէտք։ Սրա դունչ ու մռթին նայիր, պի՛ղծ հոգի։ Տես, զինուել է և ատրճանակ է արձակում մարդկանց վրայ։ Նզովից արմատ։

Նա հայհոյում էր և ուտում, որից նրա հայհոյանքը կորցնում էր իր շեշտն ու տպաւորութիւնը

—Սպասի՛ր ուտենք—պրծնենք, քեզ հետ հաշիւ կտեսնենք,—սպառնաց «ուսանողը»։

Գիշերային մթութեան մէջ լսուեց մի կողկողացին հեկեկանք, որ մեզ վախեցրեց։

—Ախր ես ի՞նչ գիտնամ, տղերք։ Կրակեցի, որովհետև վախենում էի... Նոր Աֆոնից գնում եմ Սմոլենսկի նահանգը...օհ, Աստուած իմ, ջերմն ինձ սպանեց... հէնց որ արևը մայր է մտնում—օրս խաւարում է։ Ջեր-

մից էլ, Աֆոնից էլ հեռացայ... այնտեղ հիւանդութիւն էի անում... հիւան եմ... Ունիմ կին... երկու աղջիկ... երեք-չորս տարի է, նրանց երեսը չեմ տեսել... Կերէք, եղբայր, բոլորը կերէք...

—Կուտենք, մի խնդրիր,—ասաց «ուսանողը»։

—Տէր Աստուած, եթէ գիտենայի, թէ դուք խաղաղ, լաւ մարդիկ էք... ատրճանաձկ կարձակէի... Իսկ այստեղ, աղբէր ամայի դաշտ է... մութ գիշեր. ես մեղաւոր եմ, հը՞։

Նա խօսում էր և լալիս, աւելի ճիշտ՝ մի տեսակ կերկեր՝ վեհերոտ ձայն էր հանում։

—Ի՞նչ է ճնկճընկում,—արհամարհանքով ասաց զինուորը։

—Նա անպատճառ փող կունենայ.—յայտնեց «ուսանողը»։

Զինուորն աչքերը կկոցելով՝ նայեց նրան և քթի տակ ծիծաղեց.

—Գուշակող ես, հա...Ա՛յ ինչ. եկէք խարոյկ վառենք ու քնենք։

—Իսկ նա՞։

—Գլուխը քարը։ Հօ խորովելու չենք նրան։

—Պէտք էր.—ասաց «ուսանողը» իր սրածայր գլուխը շարժելով։

Մենք գնացինք բերելու մեր հաւաքած վառելիքը, որ թողինք այնտեղ, որտեղ կանգ առանք հիւանի ձայնից. և քիչ յետոյ նստած էինք խարոյկի շուրջը։ Նա հանդարտ այրւում էր խաղաղ գիշերը և լուսաւորում էր մեր բռնած փոքրիկ տարածութիւնը։ Մեր քունը տանում էր, թէպէտ և մենք ազատ կարող էինք մի անգամ ևս ընթրել։

—Եղբայրներ,—կանչեց մեզ հիւանը։ Նա պառկած

էր մեզնից երեք քայլ հեռու և երբեմն ինձ թւում էր, թէ նա շշնջում է.

—Հա՜ա՜։

—Կարելի՞ է գամ այդտեղ.,. կրակի մօտ։ Մահս մօտենում է... Բոլոր ոսկորներս ջարդւում են... Տէր Աստուած, երևի, տուն չեմ հասնելու...

—Սողա՛ այստեղ,—թոյլ տուեց «ուսանողը»։

Հիւանը կամաց՝ կարծես վախենալով՝ գետնի երեսով շարժուեց դէպի խարոյկը։ Դա մի բարձրահասակ սարսափելի նիհար մարդ էր. նրա վրայ ամեն ինչ տաբօրինակ կերպով երերում էր, խոշոր պղտոր աչքերի մէջ այտատիպլում էր նրան հալ ու մաշ անող ցաւը։ Այլանդակուած դէմքը ոսկրոտ էր և մինչև իսկ խարոյկի լուսաւորութեան տակ դեղնած, մեռելատիպ գոյն ունէր։ Նա ամբողջ մարմնով դողացնում էր և զարթեցնում խղճահարութիւն։ Դէպի խարոյկի բոցը պարզելով իր երկար, նիհար ձեռքերը, նա շփում էր իր ոսկրոտ մատները և նրանց յօդերը շարժւում էին ծանր և դանդաղ։ Ի վերջոյ մարդ զգւում էր նրա վրայ նայելուց։

—Ի՞նչպէս է որ դու այսպէս — ոտով ես գնում. չլինի՞ ժլատ մարդ ես,—մռայլ կերպով հարցրեց զինուորը։

—Այսպէս խորհուրդ տուին... ծովով մի գնար, ասում են, այլ ոտով՝ Խրիմի վրայով գնա, լաւ օդ ունի, ասում են։ Իսկ ես, ահա տեսնում էք, չեմ կարողանում գնալ... մեռնում եմ... Մեն—մենակ կմեռնեմ դաշտի միջին... թռչունները կլկտցահարեն ինձ... և ոչ ոք չի ճանաչիլ... Կինս... աղջկերքս ինձ կսպասեն—գրել էի նրանց... Իսկ ոսկորներս անձրևները կթրջեն... Աստուած իմ, Աստուած իմ...

Նա վիրաւոր գայլի պէս ոռնաց։

—Թիւ, սատանայ,—կատաղեց զինուորը՝ ոտքի ել-

նելով...—Ի՞նչ ես գցել ոռնոցդ։ Մարդկանց հանգիստ չե՞ս թողնելու, ինչ է։ Սատկում ես—դէհ սատկիր, միայն լռիր։ Ինչացո՞ւ ես։ Լռիր։

—Տուր վզակոթին,—առաջարկեց «ուսանողը»։

—Քնենք, քնենք,—ասացի ես...—Իսկ դու եթէ ուզում ես խարոյկի մօտ մնալ, լաւ է ասում, մի՛ ոռնար...

—Իմացա՞ր.—ասաց զինուորը կատաղած։—Դէհ, հասկացիր, էլի։ Կարծում ես քեզ պէտք խղճանք և նաստրճանակ արձակեցիր մեր վրայ։ Թթուած դա՛։ Ուրիշ մարդ լինէր... Թիւ...

Զինուորը լռեց և մեկնուեց գետնին։

«Ուսանողն» արդէն պառկել էր։ Ես էլ պառկեցի։ Հիւսնը վախից կուչ եկաւ և կրակին մօտենալով՝ լուռ սկսեց նայել նրան։ Ես պառկած էի նրա աջ կողմը և լսում էի—ինչպէս դողից ատամները կճրատացնում էր։ «Ուսանողը» պառկեց ձախ կողմը կծկուելով՝ կարծես, խսկոյն քնեց։ Զինուորը ձեռքերը գլխի տակ դրած՝ պառկած էր և նայում էր երկնքին։

—Ի՞նչ գիշեր է, է։ Որքան աստղեր կան... տօթ է...—քիչ յետոյ դարձաւ նա ինձ։—Հապա երկինքը—վերմակ է, ո՛չ թէ երկինք։ Սիրում եմ այս թափառական կեանքը։ Ճիշտ է—ցուրտ էլ կայ, քաղց էլ կայ, բայց, դէհ, մարդս շատ ազատ է... Ոչ մի իշխանաւոր չունիս...Ինքդ գլխիդ տէրն ես... Կուզես—գլուխդ կտրիր—մի խօսք ասող չի լինիլ... Շատ լաւ է...։ Այս օրերը շատ տանջուեցի քաղցից, շատ դաղաղեցի... իսկ այժմ ահա պառկած եմ և նայում եմ երկնքին... Աստղերն ասես աչքով են անում ինձ, կարծես, ասում են.—բան չկա՛յ, Լակուտին, անդադար շրջիր երկրիս երեսին և ոչ ոքի կեր մի գնար... Հա՛... Եւ սիրաս հան-

գիստ է...։ Իսկ դու... անունդ ի՞նչ է, էյ բարեկամ։ Ինձ վրայ չբարկանաս և ոչընչից չվախենաս...Հա, հացըդ կերանք՝ այդ ոչինչ.—դու հաց ունէիր, մենք չունէինք—քոնը կերանք... Իսկ դու, վայրենի՛, գնդակ ես արձակում... Մի՞թէ չգիտես, որ գնդակից մարդուս վնաս կըգայ։ Քիչ առաջ ես շատ զայրացայ քեզ վրայ, և, եթէ դու վէր չընկնէիր, բարեկամ, մի լաւ պէտք է դնքսէի քեզ յանդգնութեանդ համար։ Գալով հացին—էգուց կհասնես Պերեկօպ և այնտեղ կգնես—գիտեմ... փող կունենաս... վաղո՞ւց է ջերմ ունիս։

Դեռ երկար ականջիս հասնում էր զինուորի թաւ բասը և հիւանդ հիւսնի կերկեր ձայնը։ Գիշերը, մութ՝ սև գիշերն աւելի ու աւելի իջաւ երկրիս վրայ. կուրծքս լցուում էր թարմ առողջ օդը։

Խարոյկից տարածուում էր միապաղաղ լոյսը և կենսունակ ջերմութիւնը... Քունս գալիս էր։ . . . . . .

—Վեր կաց։ Շո՛ւտ։ Գնանք։

Ես երկիւղից աչքերս բաց արի և արագ ոտքի կանգնեցի. զինուորն ինձ օգնեց՝ ձեռքիցս պինդ քաշելով։

—Դէհ, շո՛ւտ. գնանք։

Նրա դէմքը մռայլ էր և տագնապալից։ Ես շուրջս նայեցի։ Արևը նոր էր ծագում, և նրա վարդագոյն շողքըն արդէն ընկել էր հիւսնի անշարժ և կապտաւուն դէմքին։ Բերանը բաց էր, աչքերը դուրս էին եկել իրանց փոսից և նայում էին պաղ հայեացքով, որ արտայայտում էր սարսափ։ Կրծքի վրայի շորերը բոլորովին պատառոտած էին և նա ընկած էր մի տեսակ անբնական՝ ջարդ ու բուրդ եղած դիրքով։ «Ուսանողը» չկար։

—Էհ, չկտացա՞ր նայելուց։ Գնանք, ասում եմ.—յորդորելով ասաց զինուորը՝ թևիցս քաշելով։

—Մեռա՞լ է,— հարցրի ես՝ առաւօտեան զովու-թիւնից սրսփալով։

—Ի հարկէ։ Քեզ էլ որ խեղդեն, դու էլ կմեռնիս, —բացականչեց զինուորը։

—Սրան... «ուսանողն» է...—բացականչեցի ես։

—Հապա ո՞վ։ Կարելի է—դո՛ւ. կամ ե՞ս։ Հա։ Ա՛յ քեզ ուսումնական... ճարպիկ կտրեց մարդու դատաստանը և մեզ էլ լաւ թալակը ձգեց։ Գիտենայի—երեկ ես այդ ուսանողին կպանէի։ Մի անգամից կպանէի։ Շը՛խկ, կհասցնէի բռունցքով քունքին—և աշխարհից մի գարշելի կղակէր։ Ախր ինչ արեց, հասկանո՞ւմ ես։ Հիմայ մենք այնպէս պէտք է գնանք, որ ոչ մի մարդ մեզ չտեսնի. հասկացա՞ր։ Որովհետև հիւանին այսօր կը-գտնեն և կտեսնեն, որ խեղդուած է և կողոպտուած։ Եւ պիտի մեզ հետևեն... էհ, ո՞րտեղից ես գալիս... ո՞րտեղ ես գիշերել։ Ե՞ւ... կբռնեն մեզ... թէպէտ և մեզ մօտ ոչինչ չկայ... բայց նրա ատրճանակը ծոցումս է։ Ա՜յ բան։

—Դէն գցի՛ր.—խորհուրդ էի տալիս ես։

—Դէն գցե՞մ,—մտախոհ կերպով ասաց նա։—Թանկ արժէ... կարելի է մեզ չբռնեն... Ո՛չ, չեմ գցիլ... ո՞վ գիտէ թէ հիւանը ատրճանակ ունէր։ Չեմ գցիլ։ Երեք մանէթ արժէ։ Մի հատ էլ գնդակ կայ։ Երանի՜ հէնց այս գնդակով մեր սիրելի ընկերոջ ականջը տըժ-ժացնէի։ Շունը, տեսնես, որքան փող յափշտակեց... Անիծա՛ծ։

—Խե՜ղճ աղջիկներ...—ասացի ես։

—Աղջիկնե՞ր. ի՞նչ աղջիկ։ Հա, նրա... Լաւ, նրանք կմեծանան, մեզ էլ չեն առնիլ. նրանց մասին խօսելն էլ աւելորդ է... Գնանք, եղբայր, շուտ-շուտ գնանք... ո՞ւր գնանք։

—Չգիտեմ... միևնոյն է։

—Ես էլ չգիտեմ և գիտեմ, որ միևնոյն է։ Դէպի աջ գնանք—այնտեղ ծով պիտի լինի։

Մենք դէպի աջ գնացինք։

Ես յետ նայեցի։ Մեզանից հեռու բարձրանում էր մի մթնագոյն բլրակ, իսկ նրա վրայ շողշողում էր արևը։

—Նայում ես—չլինի՞ յարութիւն առաւ։ Մի՛ վա-խենար. չի վեր կենալ մեր յետևից հասնելու... Մեր ուսումնականը, ինչպէս երևաց, ճարտար մարդ էր, հի-մնաւոր գործ տեսաւ... Տեսա՞ր ընկերը։ Լաւ խրեց մեզ։ Էհ, եղբայր, մարդս փչանում է, տարեց-տարի աւելի ու աւելի փչանում է,—տխրութեամբ ասաց զինուորը։

Անմռունչ և ամայի տափաստանը վաղորդեան արևի շողերով լցուած՝ ծաւալւում էր մեր շուրջը՝ հորի-զոնի վրայ միանալով երկնքի հետ, որն այնպէս ջինջ էր, այնպէս հրապուրիչ և լուսալիր, որ, թւում էր, ոչ մի խաւար անարդար գործ հնարաւոր չէր այդ ազատ դաշտավայրի ընդարձակ տարածութեան վրայ, որ ծած-կուած էր երկնքի կապոյտ գմբէթով։

—Սաստիկ ուտել եմ ուզում, բարեկամ,—ասաց ընկերս՝ գլանակը փաթաթելով։

—Ի՞նչ պիտի ուտենք այսօր, ո՞րտեղ և ի՞նչպէս։

Խնդիր է։

. . . . . .

Այստեղ պատմիչս—հիւանդանոցի հարևանս—վեր-ջացրեց իր վէպիկն, ասելով։

—Ահա բոլորը։ Ես շատ մտերմացայ այդ զինուո-րի հետ, և մենք միասին հասանք մինչև Կարսի շրջանը։ Սա մի բարի և շատ փորձուած տղայ էր և թափառա-կան բոսեակի տիպար։ Ես յարգում էի նրան։ Մենք մի-ասին գնացինք մինչև Փոքր Ասիա և այնտեղ կորցրինք իրար...

—Դուք երբեմն յիշում էք հիւսնին.—հարցրի ես։

—Ինչպէս տեսնում էք, կամ ինչպէս լսեցիք...

—Եւ... ինչ... Նա ծիծաղեց։

—Ի՞նչ պիտի զգայի ես այդ դէպքում։ Ես մեղաւոր չեմ, որ նրան այս բանը պատահեց, ինչպէս և դուք մեղաւոր չէք այն բանում, ինչ որ ինձ է պատահել... Եւ առհասարակ ոչ ոք ոչ մի բանում մեղաւոր չէ, որովհետև մենք ամենքս միատեսակ անասուններ ենք։

1897

ԶԱՆԶՐՈՑԹԻՑ.

. . . Թանձր ծխի կոյտեր վիժելով՝ մարդատար գնացքը իբրև մի վիթխարի սողուն՝ անյայտանում էր հատարակ հեռաստանում՝ հացաբոյսերի դեղին ծովի մէջ։ Գնացքի ծխի հետ արևակէզ օդի մէջ անյայտանում էր նրա զայրացկոտ աղաղակը, որ մի քանի բոպէ ընդհատում էր անդորը լռութիւնը լայնարձակ ամայի դաշտի, որի մէջտեղը երկաթուղու փոքրիկ կայարանը իր միայնութեամբ զարթեցնում էր տխուր զգացմունք։

Եւ երբ կառախմբի խուլ, բայց կենդանի աղմուկը ցրուեց — հատկաւ անամպ երկնքի պայծառ գիշերի տակ, կայարանի շուրջը նորից տիրեց ճընշող լռութիւնը, և նրա հետ տափաստանի տաղտուկ միակերպութիւնը սաստկացաւ։

Դաշտը ոսկեզօծ էր, երկինքը կապուտակ։ Երկուսն էլ անսահման մեծ էին։ Կինամոնագոյն շէնքերը, որոնց մէջտեղն էր կայարանը, պատահական բծերի տպաւորութիւն էին թողնում, որոնք մեծացնում էին մեղամաղձիկ պատկերի կենդրոնը, որ ջանասիրութեամբ նկարել էր երևակայութիւնից և ոգևորութիւնից զուրկ նկարիչը։

Ամենայն օր ժամը 12-ին և ճաշից յետոյ 4-ին տափաստանից գալիս են կառախմբերը և երկու բոպէ

կանգ են առնում։ Այդ չորս բոպէն է կարարանի գլխաւոր և միակ զուարճութիւնը. նրանք են, որ կայարանի ծառայողների համար տպաւորութիւններ են բերում։

Իւրաքանչիւր գնացքի մէջ կան տեսակ-տեսակ մարդիկ զանազան հագուստով։ Նրանք յայտնւում են մի վայրկեան. վագոնների լուսամուտներից երևում և անյայտանում են յոգնած—վաստակած, անհամբեր և անտարբեր դէմքեր,—զանգը տալիս է, սուլոցը վիշում է—և նեարդեր գրգռող աղմուկով նրանք սլանում են դաշտի միջով դէպի հեռուն, դէպի քաղաքները, ուր եռում է աղմկալից կեանքը։

Իրանց առանձնութեան մէջ ձանձրացող կայարանի ծառայողներին հետաքրքիր է տեսնել այդ դէմքերը, և գնացքը ճանապարհ գցելուց յետոյ նրանք իրար հաղորդում են իրանց թռուցիկ տպաւորութիւնները։ Նրանց շուրջը ծաւալւում է անմռունչ տափաստանը, և նրանց վերևը—անտարբեր երկինքը, իսկ նրանց սրտին տիրում է մի անորոշ նախանձ դէպի այն մարդիկ, որոնք ամեն օր նրանց առաջից սլանում են ուր որ է, այն ինչ իրանք մնում են մի ամայի տեղ բանտարկուած՝ կեանքից հեռու ապրելով՝ և միայն չորս բոպէ մարդու երես տեսնելով։

Եւ ահա գնացքը ճանապարհ գցելուց յետոյ՝ նրանք կանգնած են կայարանի աստիճանների վրայ՝ աչքերով հետևելով սև երիզին, որ անյայտանում է հացաբոյսերի դեղին ծովի մէջ, և լռում են իրանց առաջից սլացող կեանքի տպաւորութեան տակ։

Նրանք գրեթէ բոլորն էլ այստեղ են. կայարանի կառավարիչը՝ բարեսիրտ, լիք-լիք, շէկլիկ մի մարդ՝ կազակի խոշոր ընչացքներով. սրա օգնականը—շեկակարմիր երիտասարդ փոքրիկ սուր մօրուքով. կայարանի պահապանը՝ փոքրիկ, ժիր, խորամանկ Լուկան, և գծի ծառայողներից մէկը—սլաքպան (стрѣлочникъ) Գոմոզովը, պնդակազմ, լայն մօրուքով մի լուռումունջ գիւղացի՝ լուրջ ու կուշտ դէմքով։

Կայարանի դռանը, նստարանի վրայ նստած է կառավարչի ամուսինը, մի փոքրիկ հաստլիկ կին, որ շատ նեղւում է շոգից։ Նրա ծնկների վրայ քնած է երեխան, որի դէմքը նոյնպէս լիտիկ ու կարմիր է, ինչպէս և մօրը։

Գնացքը ծածկւում է զառիվայրի յետևը և թւում է, թէ նա թաղւում է երկրի մէջ։

Այն ժամանակ կայարանի կառավարիչն ասում է՝ դառնալով դէպի կինը.

—Էհ, Սօնիա, ինքնաեռը պատրաստ է։

—Ի հարկէ,—ալարելով և կամաց ասում է նա։

—Լուկա, դու այստեղ... էս էնինքը... աւելիր ճանապարհն ու աստիճանները... տեսնում ես, որքան կեղտ են թափթփել...

—Գիտեմ, Մատվէյ Եգորովիչ...

—Հա... էհ, ինչպէս, թէյ չխմե՞նք, Նիկոլայ Պետրովիչ։

—Խմենք...—ասում է օգնականը։

Իսկ միւս գնացքը ճանապարհ գցելուց յետոյ Մատվէյ Եգորովիչն հարցնում էր կնոջը.

—Էհ, Սօնիա, ճաշը պատրաստ է։

Յետոյ նա նոյն հրամանն է տալիս Լուկային. հրաւիրում է օգնականին, որ ճաշում է նրանց հետ։

—Հը, ինչպէս. ճաշում ենք։

—Ինչպէս միշտ...

Աստիճանների վրայից անցնում են սենեակը, որտեղ շատ ծաղիկ և քիչ կարասիք կայ. որտեղ խոհա-

նոցի և բարուրի հոտ է գալիս։ Եւ այստեղ՝ սեղանի շուրջը խօսակցում են գնացքի մասին, որ սահեց—անցաւ նրանց առաջից։

—Նկատեցի՞ք թուխ կնոջը դեղին զգեստով, Նիկոլայ Պետրովիչ, երկրորդ կարգումն էր։ Թունաւոր զատ էր...

—Վատ չէր, բայց անճաշակ էր հագնուած.—պատասխանում է օգնականը։

Նա միշտ խօսում է կարճ ու ազդու, որովհետև իրան համարում է աշխարհ տեսած և կրթուած մարդ։ Աւարտել է գիմնազիան։ Նա մի տեսր ունի սև կողերով։ Նրա մէջ գրում է հռչակաւոր մարդկանց ասացուածները, որ նա քաղում է լրագրական թերթոններից կամ պատահմամբ ձեռքն անցած գրքերից։ Կառավարիչը առանց այլևայլութեան ընդունում է նրա հեղինակութիւնը ամեն բանի մէջ, որ իրանց պաշտօնին չէ վերաբերում, և նրան լսում է ուշադրութեամբ։ Շատ դուր են գալիս նրան մանաւանդ Նիկոլայ Պետրովիչի տեսրի խորիմաստ բանները, որոնցով նա միշտ միամբտաբար հիանում է։ Թխադէմ կնոջ զգեստի մասին օգնականի արած նկատողութիւնը Մատվէյ Եգորովիչի մէջ հարց է զարթեցնում։

—Մի՞թէ դեղինը չի սազում թուխ կանանց։

—Ես խօսում եմ ձևի, տարազի և ոչ գոյնի մասին,—բացատրում է Նիկոլայ Պետրովիչը, ապակեայ վազից քաղցրաւենիք լցնելով իր ափսէն։

—Տարազը—այդ ուրիշ բան է...—համաձայնում է կառավարիչը։

Խօսակցութեան մասնակցում է նրա կինը, որովհետև այս նիւթը նրան մատչելի և հասկանալի է։ Բայց որովհետև այս մարդկանց միտքը սրուած չէ, խօսակ-

ցութիւնը դանդաղ է առաջ գնում և հազիւ թէ յուզում նրանց զգացմունքները։

Իսկ լուսամուտից երևում է դաշտը, որ կախարդուած է այնտեղ տիրող լռութեամբ, և երկինքը, որ վսեմ է իր վեհաշուք անդորրութեամբ։

Գրեթէ ամեն ժամ գալիս են ապրանքատար կառախմբերը, սակայն նրանց վրայ ծառայողները վաղուց ծանօթ են։ Այդ բոլոր կոնդուկտորները քնաթթախ՝ ձանձրալի ճամբորդութիւնից ընկճուած մարդիկ են։ Ասենք, երբեմն սրանք պատմում են գծի վրայ տեղի ունեցած պատահարների մասին.—այսինչ տեղը գնացքը մարդ տրորեց. կամ խօսում են ծառայութեան մէջ եղած նորութիւնների մասին.—այսինչը տուգանքի է ենթարկուած, այսինչը տեղափոխուած է։ Այս նորութիւններն էլ քննութեան չեն առնում, այլ լափում են, ինչպէս քաղցրասէր մարդը լափում է համեղ և հաղուագիւտ կերակուրը։

Իսկ արևը կամաց-կամաց թեքւում է երկնակամարից դէպի տափաստանի եզրագիծը, և երբ նա այնտեղ համբուրում է երկրին, այն ժամանակ դառնում է բոսորագոյն։ Դաշտի վրայ ընկնում է լուսագոյն լոյսը, որ զարթեցնում է դժգոհութեան թախծալի զգացմունք և անորոշ միտումն դէպի հեռաստանը—դէ՞ւրս ա՛յդ ամայի անապատից։ Յետոյ արևը հպում է երկրին և դանդաղ իջնում է նրա մէջ կամ նրա յետևը։ Երկնքի երեսին դեռ երկար խաղում են հանդարտ՝ վերջալոյսի պայծառ գոյները. բայց վերջալոյսը շարունակ գոյնը զցում է, և վրայ է հասնում տաք և անմռունչ աղջամուղջը։ ՊէՏին են տալիս աստղերը և դողդողում են երկնքի երեսին, ասես՝ վախենում են երկրի վրայ տիրող ձանձրոյթից։

Մթութեան մէջ տափաստանը պարփակւում է։ գիշերային խաւարն ամեն կողմից լուռ սողում է դէպի կայարանը։ Եւ ահա գալիս է գիշերը, սև և մռայլ գիշերը։

Կայարանում վառում են ճրագները. ամենից պայծառ և ամենից բարձր է ուղեցոյց լապտերի կանաչաւուն կրակը։ Իսկ նրա շուրջը լուռ է և խաւար։

Երբեմն հնչում է զանգը—գնացքի յուշարարը. զանգի շտապողի ձայնը տարածւում է դաշտումը և արագ անհետանում է նրա մէջ։

Զանգից յետոյ հեռաւոր խաւարի միջից շուտով դուրս է վազում կարմիր, փայլատակող կրակը, և դաշտի անդորրութիւնն ընդհատւում է կառախմբի խուլ դղրդիւնով, որ գալիս էր դէպի մենաւոր, խաւարամած կայարանը։

Կայարանի փոքրիկ հասարակութեան ստորին խաւն ապրում է մի քիչ ուրիշ տեսակ, քան ազնուականդասը։ Պահապան Լուկայի խելքը—միտքը շարունակ այն է—փախչել կնոջ և եղբօր մօտ՝ գիւղը, որ կայարանից եօթը վերստ հեռու է։ Այնտեղ նա «տուն ու տեղ» ունի, ինչպէս ասում է նա Գոմոզովին, երբ այս լռակեաց և լուրջ ծառայողին՝ խնդրում է իր փոխարէն հերթապահ լինել։

«Տուն ու տեղ» խօսքի վրայ Գոմոզովը միշտ ծանր հոգւոց էր հանում և ասում է Լուկային.

—Ի՞նչ արած, գնա. տանը տէր է պէտք. այդ ուղիղ է...

Իսկ մեւս սլաքպանը, Աֆանասի Եագօդան, որ նախկին զինուոր է՝ լայնալիր և կարմիր դէմքով ու ալեխառն, կոշտ մազերով, մի ծաղրածու և չարախնդաց մարդ,—Լուկային չի հաւատում։

«Տուն ու տեղ»—բացականչում է նա, քթի տակ ծիծաղելով։—Կէ՛ն... Հասկանում եմ ինչ բան է այդ... Է՛հ, ի՞նչպէս, կինդ առաջ այրի՞ էր, ինչ է, թէ զինուորի կին էր։

—Ախ դու հաւի թագաւոր, արհամարհանքով ձայն է տալիս Լուկան։

Նա Եագօդային այդպէս էր կոչում նրա համար, որ վաղեմի զինուորը չափից դուրս սիրում էր թռչուններին։ Նրա դիտանոցն (будка) ամբողջովին՝ թէ դրսից և թէ ներսից կախկխուած էր վանդակներով և ընտերով։ Նրա մէջը, ինչպէս և շուրջը, ամբողջ օրը շարունակ հնչում էր թռչունների ծլրտոցը։ Զինուորի գերած լոքերը անդադար ճղճղում էին իրանց միակերպ երգը. սարեակները մրթմրթում իրանց երկար ճառերը, փոքրիկ գոյնզգոյն թռչունները միալար ճուողում, ճչում, երգում էին՝ քացրացնելով զինուորի մենաւոր կեանքը։ Նա իր բոլոր ազատ ժամանակը նրանցով է զբաղւում և նրանց ցոյց տալով գգուանք և հոգատարութիւն՝ ընկերներին բանի տեղ չէ դնում։ Լուկային նա օձ է անուանում, Գոմոզովին—աւանակ, և առանց քաշուելու նրանց երեսին ասում է, որ նրանք երկուսն էլ կանանց յետևից քաշ եկողներ են և որ դրա համար հարկաւոր էր նրանց երկուսին էլ ծեծել։

Լուկան նրա խօսքերին ուշադրութիւն չէր դարձնում, բայց եթէ զինուորին յաջողուէր նրան զայրացնել, Լուկան երկար ու կծու հայհոյում էր նրան.

—Քոսոտ բերդապահ *), մկան թափթփուկ։ Ախր դու ի՞նչ ես հասկանում, այծի թմբկահար։ Կեանքումդ

*) Զինուորականների մէջ բերդապահները և շտաբում ծառայողները միմեանից արհամարհուած են։ Ծ. Թ.

թնդանօթների տակից գորտերին ես փախցրել և զօրագնդի կաղամբին պահապան ես եղել. քո ի՞նչ բանն է դատողութիւն տալ։ Գնա, գնա թռչուններիդ մօտ, նրանց հրամաններ տուր, հաւի՛ հրամանատար։

Պահապանի հայհոյանքը հանդարտ լսելուց յետոյ, զինուորը գնում էր կայարանի կառավարչի մօտ գանգատուելու. իսկ նա բղաւում էր, որ իր մօտ մարդ չըմտնի այդպիսի դատարկ բանի համար, և վռնդում էր զինուորին։ Այն ժամանակ Եագօդան գտնում էր Լուկային և այս անգամ արդէն ինքն էր սկսում նրան հայհոյել առանց տաքանալու, կակուղ-կակուղ՝ ծանր և զզուելի խօսքերով, որոնցից Լուկան շուտով փախչում էր թքելով։

Գոմոզովը զինուորի տրտունջներին պատասխանում էր ախ ու վախով և քաշուելով արդարանում էր.

—Ի՞նչ արած։ Ոչինչ չես կարող անել այդ... Ի հարկէ... շատ է երես առել... Բայց, ի միջի այլոց, մի՛ ասիր—մի՛ լսիր...

Մի անգամ զինուորը պատասխանեց նրան ծաղրելով.

—Բան ես սովորել, էլի։ Մի՛ ասիր—մի՛ լսիր... դէհ, թէ որ չասես ու չլսես, էլ խօսելու բան չի լինիլ . . .

Կառավարչի կնոջից զատ՝ կայարանում կար էլի մի կին—խոհարարուհին։ Նրան կոչում էին Արինա. մօտ քառասուն տարեկան էր և շատ տգեղ, պնդակազմ, կախկխուած ատինքներով, միշտ կեղտոտ և ցնցոտիներ հագած։ Նա ման էր գալիս ամբողջ մարմնով շըրջուելով մի ոտից միւսի վրայ, և նրա ծաղկատար

դէմքի վրայ փայլում էին բզով ծակած, վախվխորած և կնճիռներով պատած աչքերը։ Նրա անճոռնի կերպարանքի մէջ մի տեսակ ստրկական ընկճուած բան կար, և նրա հաստ շրթունքներն այնպէս էին իրար վրայ գալիս, որ, կարծես, նա ուզում էր բոլոր մարդկանցից ներողութիւն խնդրել, նրանց ոտքերն ընկնել, և չէր համարձակւում լաց լինել։ Գոմոզովն ութ ամիս անցկացրեց կայարանում՝ առանձին ուշադրութիւն չդարձնելով նրա վրայ. նրան հանդիպելիս նա ասում էր «բարով». Արինան պատասխանում էր նրան նոյնպէս. փոխանակում էին իրար հետ մի քանի խօսք և յետոյ բաժանւում էին, ամեն մարդ գնում էր իր գործին։ Բայց մէկ անգամ Գոմոզովը մտաւ կառավարչի խոհանոցը և Արինային առաջարկեց իրան համար շապիկ կարել։ Սա համաձայնեց և շապիկները կարելուց յետոյ, ով գիտէ —ինչու՝ ինքը տարաւ նրա մօտ։

—Այ շնորհակալ եմ.—ասաց Գոմոզովը։—Երեք շապիկ, հատը տաս կոպէկից՝ ասել է՝ քեզ կհասնի երեսուն կոպէկ... Ուղիղ է։

—Այդպէս է, էլի...—պատասխանեց Արինան

Գոմոզովը մտածման մէջ ընկաւ և երկար լուռ էր։

—Դու ո՞ր նահանգից ես,—հարցրեց վերջապէս կնոջը, որ շարունակ նայում էր նրա մօրուքին։

—Ռեազանի...—ասաց նա։

—Հեռու տեղից ես։ Է՛հ, ի՞նչպէս այստեղ ընկար։

—Այնպէս... ես մեն—մենակ եմ...

—Եթէ այդպէս է, դեռ աւելի հեռուն կարելի է գնալ...—հառաչեց Գոմոզովը։

Ու դարձեալ նրանք երկար ժամանակ լուռ էին։

—Ա՛յ, ես էլ։ Նիժնի Նովգորոդի նահանգից՝ Սերգաչեվսկի գաւառից եմ...—խօսեց Գոմոզովը։—Ես էլ

մենակ եմ. ես եմ ու կամ։ Բայց ժամանակով տուն ու տեղ ունէի, կին էլ ունէի... երեխէք—երկուսը։ Խոլեբային կինս մեռաւ... իսկ երեխերքս—այնպէս... Իսկ ես... էսէնինքը... դարդից քարուքանդ եղայ։ Հա՜ա։ Յետոյ փորձեցի նորից տուն ու տեղ լինել—չեղաւ. մեքենան փչացել էր. չի բանում։ Մէկ անգամ ճամբից դուրս եկայ ու էն գնալն էր—գնացի... Ահա երեք տարի է չարչարւում եմ...

—Վատ է, երբ մարդ չունի տուն ու տեղ,—կամաց ասաց Արինան։

—Էն էլ ինց...։ Դու այրի՞ ես, ինչ է։

—Աղջիկ եմ...

—Չէ՜հա.—պարզ ի պարզոյ կասկածեց Գոմոզովը։

—Աստուած վկայ, աղջիկ եմ,—հաւատացնում էր նրան Արինան։

—Էհ, ինչու՞ մարդու չգնացիր։

—Ո՞վ կառնի ինձ։ Ոչինչ չունիմ...ինչի՞ ուզեն... դէհ դէմքով էլ գեղեցիկ չեմ...

—Հա՜ա...—մտածման մէջ երկարացրեց Գոմոզովը և, մօտուքը շփելով՝ սկսեց քննողաբար նայել նրան։ Յետոյ տեղեկացաւ, ամսական որքան է ստանում նա։

—Երկու մանէթ ու կէս...

—Այդպէս։ Էհ... Ասել է թէ երեսուն կոպէ՞կ եմ տալու քեզ։ Ա՛յ ինչ... երեկոյեան արի տար... ժամը, էսպէս, տասին մօտ, հա՞։ Ես կտամ... թէյ կխմենք, մի քիչ խօսելով ժամանակ կանցնենք... երկուսս էլ մենակ ենք...։ Արի՛...։

—Կգամ...—պարզօրէն ասաց նա և գնաց։

Յետոյ երեկոյեան ուղիղ ժամը տասին գալով նրա մօտ՝ նրա սենեակից հեռացաւ լուսաբային։

Գոմոզովն էլ չկանչեց նրան իր մօտ և երեսուն

կոպէկն էլ չտուեց նրան։ Արինան ինքն եկաւ նրա մօտ, ապուշի պէս հլու հնազանդ, եկաւ ու լուռ ու մունջ կանգնեց նրա առաջ։ Գոմոզովը մահճակալի վրայ պառկած՝ նայեց նրան և դէպի պատը քաշուելով՝ ասաց.

—Նստիր։

Եւ երբ նա նստեց, յայտնեց նրան.

—Դու, այ ինչ, ծածուկ պահիր այս բանը։ Ոչ՞ոք չիմանայ, հա՞։ Թէ չէ ինձ վատ կլինի... ես ջահել չեմ, ոչ էլ դու... Հասկանում ես։

Նա դրականաբար գլուխը շարժեց։

Նրան ճանապարհ գցելիս Գոմոզովը իր շորերը տուեց կարկատելու և դարձեալ յիշեցրեց.

—Ոչոք չիմանայ, հա՞։

Այսպէս նրանք սկսեցին ապրել, բոլորից ծածկելով իրանց յարաբերութիւնը։

Արինան գիշերները ծածուկ նրա մօտ էր գալիս գրեթէ փորսոդ տալով։ Գոմոզովն ընդունում էր նրան ներողամտաբար, տիրաբար, և երբեմն պարզ ի պարզոյ ասում էր.

—Բայց ինչ տգեղն ես դու, հա՞։

—Նա լուռ ու մունջ ժպտում էր նրա երեսին դժգոյն մեղապարտ ժպիտով և նրա մօտից հեռանալիս՝ համարեա միշտ իր հետ տանում էր որ և է աշխատանք, որ տալիս էր նրան Գոմոզովը։

Նրանք իրար տեսնում էին սակաւ։ Բայց երբեմն Գոմոզովը կայարանում որ և է տեղ նրան հանդիպելիս՝ ասում էր կիսաձայն.

—Այսօր եկ...

Ու Արինան հլու-հնազանդ գնում էր նրա մօտ. գնում էր մի այնպիսի լուրջ արտայայտութեամբ, ասես,

եկաւ նրա համար, որ կատարէ իր պարտքը, որի կա-
բեւորութիւնը հասկանալի է դարձել նրա համար։

Իսկ երբ տուն էր դառնում, այն ժամանակ նրա
դէմքը դարձեալ ընդունում էր յանցաւորութեան և եր-
կիւղի սովորական մեռելատիպ արտայայտութիւնը։

Երբեմն նա կանգնելով որ և է տեղ—մի անկիւն
կամ ծառի յետևը, երկար նայում էր տափաստանի կող-
մը։ Այնտեղ տիրում էր գիշերը և սրա դաժան լռու-
թիւնից նրա սիրտը ճմլւում էր։

Մի անգամ, երեկոյան գնացքը ճանապարհ գցե-
լուց յետոյ՝ կայարանի վարչութիւնը թէյ սարքեց պար-
տիզում՝ Մատվէյ Եգորովիչի բնակարանի լուսամուտ-
ների առաջ՝ բարդիների խիտ ստուերի տակ։

Շոգ եղանակին նրանք յաճախ անում էին այս.—
սա այնուամենայնիւ մի քիչ փոփոխութիւն էր մտցնում
նրանց կեանքի միակերպութեան մէջ։

Թէյը խմում էին և լռել էին՝ գնացքի բերած բո-
լոր տպաւորութիւններն իրար հաղորդելուց յետոյ։

—Այսօր երեկուանից շոգ է,—ասաց Մատվէյ Եա-
գորովիչը՝ մի ձեռքով դատարկ բաժակը կնոջը տալով
և միւսով երեսի քրտինքը սրբելով։

Կինը բաժակն առնելով՝ յայտնեց.

—Ջանձրոյթից այդպէս է թւում, թէ շոգ է...

—Հը՞մ։ Կարելի է... յիրաւի... ձանձրալի է կեան-
քը։ Ա՛յ, այս դէպքում թղթախաղը լաւ է... բայց մենք
միայն երեք հոգի ենք...

Նիկոլայ Պետրովիչը ուսերը թօթուեց և աչքերը
կկոցելով՝ որոշակի ասաց.

—Թղթախաղը Շոպէնհաուերի ասելով՝ մտքի սը-

նանկութիւն է։

—Կեցցէ,—հիացաւ Մատվէյ Եգորովիչը։—Ինչպէս
է՞ր. մտքի սնանկութիւն... հա։ Իսկ ասողն ով է՞։

—Շոպէնհաուէրը, գերմանացի փիլիսոփայ է...

—Փիլիսոփայ... հը՞մ...

—Ինչպէս, այդ փիլիսոփաները համալսարաններում
ծառայում,—հետաքրքրուեց Սոֆիա Իվանովնան։

—Այսինքն, ինչպէս ասեմ։ Դա աստիճան (Чинъ)
չէ, այլ... այսպէս ասած՝ բնածին ընդունակութիւն է...
փիլիսոփայ կարող է լինել ամեն մարդ... ով ի ծնէ
սովորութիւն ունի մտածել և ամեն բանի սկիզբն ու
վախճանը փնտրել։ Ի հարկէ համալսարաններում էլ
կան փիլիսոփաներ... բայց նրանք կարող են լինել և...
այնպէս... մինչև անգամ կարող են ծառայել երկաթու-
ղու վրայ...

—Շատ ռոճիկ են ստանում նրանք, որոնք համալ-
սարաններում են ծառայում։

—Խելքին նայելով...

—Բայց եթէ չորրորդ ընկեր լինէր—հիանալի վինթ
կխաղայինք.—հառաչելով ասաց Մատվէյ Եգորովիչը։

Ու խօսակցութիւնն ընդհատուեց։

Կապոյտ երկնքի երեսին երգում են արտոյտները,
բարդիների վրայ ոստից ոստ են թռչկոտում շիկահա-
ւերը և մեղմ շուայտնում են։ Սենեակում լաց է լինում
երեխան։

—Արինան այնտե՞ղ է,—հարցնում է Մատվէյ Եգո-
րովիչը։

—Ի հարկէ...—կարճ պատասխանում է նրան կինը։

—Ինքնատիպ կին է այդ Արինան. նկատեցէք
Նիկոլայ Պետրովիչ...

—Ինքնատիպ լինելը հաստատակ, չնչին լինելու

նշան է,—իբր ինքն իրան ասում է Նիկոլայ Պետրովիչը մտորուն՝ խոհուն կերպարանք ընդունելով։

—Ինչպէ՞ս.—հետաքրքրւում է կառավարիչը։

Եւ երբ Նիկոլայ Պետրովիչը պարզ կրկնում է ասացուածքը, նա դիւրեկան ձևով կկոցում է աչքերը, իսկ Սոֆիա Իվանովնան քնքոյշ ձևով ասում է.

—Ի՞նչ լաւ էք յիշում ձեր կարդացածը... իսկ ես... ա՛յ, կըկարդամ և հետևեալ օրը, թէկուզ սպանէք, ոչինչ չեմ յիշիլ... Վաղուց չէ „Нива"-ի գրքոյկից մի շատ հետաքրքիր և զուարճա՛ի բան կարդացի. ի՞նչ.—մի խօսք չեմ յիշում։

—Սովորութիւն է,—կարճ բացատրեց Նիկոլայ Պետրովիչը։

—Չէ, այս մէկը լաւ է... այն միւսից... անունն ինչպէս էր... Շոպէնհաուէր...—ժպտալով ասում է Մատվէյ Եգորովիչը։—Դուրս է գալիս, որ ամեն նոր բան դառնում է հին։

—Եւ ընդհակառակը, որովհետև մի բանաստեղծ ասել է. «Այո՛, գոյութեան իմաստութիւնը անտեսող է,—նրա մէջ ամեն նոր բան հիւսւում է հնից»։

—Թիւհ, սատանան տանի։ Այդ ինչ բան է, ասես թէ գրպանից էք հանում խօսքերը։

Մատվէյ Եգորովիչն ինքնագոհ ծիծաղում է, նրա կինը սիրալիր ժպտում է. իսկ Նիկոլայ Պետրովիչը հպարտանում է իր մէջ և ուզում է ծածկել այդ, բայց չի յաջողւում։

—Ո՞վ է ասել այն առաջինը.

— Բարեատինսկին, բանաստեղծ է։

—Իսկ այն մի՞ւսը։

—Նոյնպէս բանաստեղծ—Ֆոֆանով։

—Կեցցեն,—քաջալերում է բանաստեղծներին Մատվէյ Եգորովիչը և գոհ ժպիտը դէմքին՝ մի տեսակ եղանակով կրկնում է երկտողը։

Զանձրոյթը կարծես խաղ է անում նրանց հետ—մի բոպէ ազատում է նրանց իր գրկից և նորից պինդ գրկում է։ Այն ժամանակ նրանք դարձեալ լռում են՝ հով տալով իրանց, որպէսզի ազատուեն շոգից, որ սաստկանում է թէյ խմելուց։

Տափաստանում միայն արևն է։

—Հա՛, ես խօսում էի Արինայի մասին...—մտաբերում է Մատվէյ Եգորովիչը։—Տարօրինակ կին է. նայում եմ նրան և զարմանում եմ։ Կարծես նրան հարուած է հասել, ո՛չ ծիծաղում է, ո՛չ երգում. չխօսկան է... ասես կոճղ լինի։ Այն ինչ նա շատ լաւ է աշխատում և, գիտէ՞ք, այնպէս է նայում Լելիային, այնպէս ուշադիր է դէպի երեխան...

Նա խօսում է կամաց՝ չուզենալով որ Արինան լսէ իր խօսքերը։ Նա գիտէ, որ ծառային գովել չի կարելի, եթէ չես ուզում, որ երես առնի։

Կինն ընդհատում է նրան՝ խորհրդաւոր կերպով դժգոհելով.

—Լա՛ւ, թող տուր նրան... դու նրա մասին ամեն բան չգիտես։

—Любви раба,
Я такъ слаба
Въ борьбѣ съ тобой,
О, демонъ—мой!"— *)

կամացուկ և եղանակով ասում է Նիկոլայ Պետրովիչը՝ գդալով չափ տալով սեղանի վրայ։ Նա ժպտում է։

*) „Սիրոյդ գերուհին եմ. ես անզօր եմ քո դէմ մաքառելու, ո՛վ իմ հրեշտակ"։

Ի՞նչ, ի՞նչ։ Նա՞... դէհ, թողէք, երկուսդ էլ սուտ էք ասում։

Ու Մատվէյ Եգորովիչը քահ-քահ ծիծաղում է։ Նրա այտերը դողդողում են և ճակատից արագ հոսում են քրտնքի կաթիլները։

—Սա բոլորովին ծիծաղաշարժ բան չէ,—կանգնեցնում է նրան կինը։—Նախ և առաջ երեխան միշտ նրա ձեռին է, երկրորդ, տեսնում ես, ինչ հաց է։ Համ անցել է, համ այրուել... Ինչու։

—Հա, հացն իսկապէս այն չէ... հարկաւոր է նրան նկատողութիւն անել։ Բայց, Աստուած վկայ, ես այդ չէի սպասում։ Ախր նա հրէշ է։ Հայ, գրողը տանի։ Իսկ մի՞սը, միւսն ո՞վ է, Լուկա՞ն։—Ես նրան խայտառակ կանեմ, փուճ կենդանի։—Թէ՞ Եագոդկան է։ Ա-ա, թրաշած պռունկ։

—Գոմոզովն է...—կարճ ասում է Նիկոլայ Պետրովիչը։

—Զէ-է։ Այդպիսի ծանրաբարոյ մարդ։ Օհո։ Է՛յ, չէ՞ք շարադրում, հը՞։

Մատվէյ Եգորովիչին շատ է հետաքրքրում այս չափազանց ծիծաղելի պատմութիւնը։ Նա մէկ ծիծաղում է ջրակալած աչքերով, մէկ էլ լուրջ ասում է, որ անհրաժեշտ է սիրահարներին խիստ նկատողութիւն անել. յետոյ պատկերացնում է նրանց մէջ տեղի ունեցող քնքոյշ խօսակցութիւնները և նորից քահ-քահ ծիծաղում է։

Վերջապէս, նա չափն անցնում է։ Այն ժամանակ Նիկոլայ Պետրովիչը դէմքին խիստ արտայայտութիւն է տալիս, իսկ Սոֆիա Իվանովնան կոպտաբար ընդհատում է մարդու ձայնը։

—Ա՛խ, սատանաներ, այ թէ կծիծաղենք նրանց

վրայ։ Այս շատ հետաքրքիր է...—չի դադարում Մատվէյ Եգորովիչը։

Գալիս է Լուկան և տեղեկացնում է.

—Հեռագիրը խփում է...

—Գալիս եմ։ Տուր 42-րդ ծանուցագիրը։

Շուտով նա իր օգնականի հետ գնում է կայարան։ Նիկոլայ Պետրովիչը նստում է հեռագրական ապպարատի առաջ՝ հարց տալով հարևան կայարանին. «կարո՞ղ եմ ուղարկել № 42 կառախումբը». իսկ նրա մեծաւորը մոտ է գալիս գրասենեակի մէջ, ժպտում է և ասում.

—Մենք միասին մի լաւ օյին կհանենք այդ փչէրի գլուխը... էլի բան է, ձանձրոյթից, գոնէ, մի քիչ կծիծաղենք...

—Այդ ներելի է...—համաձայնում է Նիկոլայ Պետրովիչը՝ շարժելով ապպարատի բանալին։

Նա գիտէ, որ փիլիսոփան պիտի խօսի լակոնական ոճով։

Նրանց շատ շուտով ծիծաղելու առիթ ներկայացաւ։

Մէկ անգամ, ինչպէս պատահեց, Գոմոզովը գիշերով եկաւ Արինայի մօտ՝ ներքնատունը, որտեղ Արինան նրա հրամանով և տիկնոջ թոյլտուութեամբ իր համար անկողին էր պատրաստել տնական զանազան անպէտք իրեղէնների մէջ։ Այստեղ խոնաւ էր և ցուրտ. իսկ կոտրատած աթոռները. տաշտերը, տախտակները և ամեն տեսակ հին ու մին բաները մթութեան մէջ ստանում էին երկիւղ ազդող գծագրութիւն. իսկ երբ Արինան այնտեղ մենակ էր լինում,—այն աստիճան սարսափում էր, որ, գրեթէ, չէր քնում և աչքերը բաց՝ ծղօ-

տի խուրձերի վրայ պառկելով՝ շարունակ ինքն իրան մրմնջում էր գիտցած աղօթքները։

Գոմոզովն եկաւ, երկար ժամանակ լուռ ու մունջ սեղմեց ու տրորեց նրան, իսկ երբ յոգնեց—քնեց։ Բայց շուտով Արինան զարթեցրեց նրան տագնապալից շշուկով.

—Տիմոֆէյ Պետրովիչ, Տիմոֆէյ Պետրովիչ.

—Հը՞.—քունը գլուխը հարցրեց Գոմոզովը

—Մեզ փակել են . . .

—Ի՞նչպէս թէ փակել.—հարցրեց նա վեր ցատկելով։

—Ծածուկ եկել են և կողպէքով . . .

—Սուտ ես ասում . . . —վախեցած և բարկացած շշնջաց նա, հրելով նրան։

—Դու ինքդ նայիր.—հլու հնազանդ ասաց նա։

Նա վեր եկաւ և ոտքի հետ տանելով ամեն բան, որ պատահում էր ճանապարհին, մօտեցաւ դրանը, հրեց և մռայլ կերպով ասաց.

—Այս զինուորի բանն է . . .

Դռան յետևից հնչեց բերկրալից քրքիջը։

—Բաց արա, դուրս գանք . . .

—Առաւօտ կթողնենք,—ասաց զինուորը և հեռացաւ։

—Հերթապահ եմ տօ սատանայ, — բարկութեամբ և նախանձելով բղաւեց Գոմոզովը։

—Ես հերթդ կպահեմ . . . դու սպասիր . . .

Ու զինուորը հեռացաւ։

—Ախ, շուն,—մորմոքալով շշնջաց Գոմոզովը։ — կաց . . . ինչ էլ լինի, դու չես կարող ինձի փակել... մեծաւոր կայ . . . Ի՞նչ կասես նրան։ Նա կհարցնէ — ո՞ւր է Գոմոզովը—հ՞ը։ Ա՛յ, պատասխան տուր այն ժամանակ...

—Այս բանը, կարելի է, հէնց ինքը մեծաւորն է նրան հրամայել.—յուսահատ և կամաց ասաց Արինան։

—Մեծաւորը.—վախեցած հարցրեց Գոմոզովը.

—Նրա ինչ՞ն է պէտք։—Եւ քիչ լռելուց յետոյ՝ բղաւեց։

—Սուտ ես ասում։

Արինան պատասխանեց միայն ծանր հոգոց հանելով։

—Ի՞նչ դուրս կգայ.—հարցրեց Գոմոզովը՝ նստելով կիսատակառի վրայ՝ դրան մօտ։—Ինչ խայտառակութիւն է ինձ համար։ Այս բոլորը դու արիր, այ. սատանի զարմ. բոլորը դու արիր...ու—ու։

Բռունցքը սեղմելով՝ նա սպառնաց այն կողմը, որտեղից հաճնում էր Արինայի շնչառութեան ձայնը։ Իսկ նա լուռ էր։

Գաղջ խաւարը պատել էր նրանց, խաւար, որ լի էր թթուած կաղամբի, բորբոսնի և էլի մի տեսակ սուր՝ քիթը գրգռող հոտով։ Դրան ճեղքերի արանքից՝ իբրև երիզ՝ ներս էր ընկել նոր լուսնի լոյսը։ Դուրսը աղմկում էր ապրանքատար գնացքը, որ մեկնում էր կայարանից։

—Ի՞նչ է, պապանձուե՞լ ես, ջադու անզգամ,—խօսեց Գոմոզովը լի թշնամանքով և ատելութեամբ։—Հիմա ես ի՞նչ անեմ։ Արիր ու պրծար, հիմա էլ լուռ ես։ Դէհ, մտածիր, ի՞նչ պիտի անենք, սատանայ։ Ո՞ւր կորչիմ այս խայտառակութիւնից։ Ա՛խ, Տէր իմ Աստուած։ Ինչո՞ւ կապուեցի այսպիսի կնոջ հետ...

—Ներողութիւն կխնդրեմ,—կամաց յայտնեց Արինան։

—Յետո՞յ։

—Կարելի է, ներին...

—Ի՞նձ ինչ դրանից։ Լա՛ւ, ներեցին, չէ՞։ Այս խայ-

տառակութիւնն ինձ վրայ կմնայ, թէ չէ։ Ինձ վրայ հօ կծիծաղին։

Լռելուց յետոյ նա նորից սկսում էր յանդիմանել և հայհոյել նրան։ Այն ինչ ժամանակն անց է կենում սոսկալի դանդաղութեամբ։ Վերջապէս կինը դողդոջուն ձայնով խնդրեց նրան.

—Թողութիւն արա, Տիմոֆէյ Պետրովիչ։

—Թողութիւն. փայտով գլուխդ պէտք է ջարդել.—գոռաց նա։

Ու դարձեալ լռութիւն տիրեց, մի դաժան, ճընշող լռութիւն՝ լի ցաւով և թշնամանքով՝ մթնում փակուած երկու հոգու համար։

—Տէր Աստուած, գոնէ շուտ լուսանար.—կսկծալի ձայնով աղերսում էր Արինան։

—Լռիր, թէ չէ քեզ լուսանալ խրատ կտամ.—սպառնաց նրան Գոմոզովը և նորից սկսեց թափել ծանրը անարգանքներ։ Յետոյ վրայ հասաւ լռութեան և անդորրութեան տանջանքը։ Իսկ ժամանակի անգթութիւնը գնալով աւելանում էր լուսաբացի մօտենալով, ասես թէ իւրաքանչիւր րոպէն դանդաղում էր անհետանալ՝ հաճոյք վայելելով այս մարդկանց ծիծաղելի, ամօթալի և ծանր վիճակից։

Գոմոզովը, վերջապէս, մի քիչ նիրհեց և վեր թռաւ աքաղաղի ձայնից, որ հնչեց ներքնատան կողքից։

—Է՛յ ջադու...քնած ես.—խուլ ձայնով հարցրեց նա։

—Ո՛չ,—խոր հոգւոց հանելով,պատասխանեց Արինան

—Չէ մի քնէիր,—ծաղրելով ասաց նա։—Ա՛խ դու...

—Տիմոֆէյ Պետրովիչ,—գրեթէ հեկեկալով բացականչեց Արինան.—մի բարկանար ինձ վրայ։ Խնայիր ինձ։ Աստծու սիրուն—խնայիր։ Ախր ես ոչ ոք չունիմ.

անտէր-անտիրական եմ։ Դու էլ ինձ... իմ հարազատ—ախր դու իմ...

—Դէհ, մի ոռնար, մարդկանց մի ծիծաղացնիր.—խստութեամբ ընդհատեց Գոմոզովը նրա հիստերիկ քչփչոցը, որը մի քիչ մեղմացրեց նրան.—պապանձուիր, գոնէ... թէ Աստծու պատիժը հասաւ...

Ու նրանք դարձեալ լուռ սպասում էին իւրաքանչիւր հետևեալ րոպէին։ Սակայն րոպէները գալիս-անցնում էին՝ նրանց համար ոչինչ չբերելով։ Ահա վերջապէս դրան ճեղքերից փայլեցին արևի ճառագայթները և շողշողուն թելերով ցրուեցին ներքնատան խաւարը։ Շուտով ներքնատան շուրջը լսուեց ոտնաձայն։ Մի ինչ որ մարդ մօտեցաւ դրանը, կանգնեց և հեռացաւ։

—Մարդասպաննե՞ր,—մռնչաց Գոմոզովը և թքեց։ Դարձեալ լուռ, լարուած սպասողական դրութիւն։

—Մեղա՛յ... Աստուծոյ...—շշնջաց Արինան։

Թւում է, թէ կամաց-կամաց մօտենում են ներքնատանը... Կողպէքը չխկում է և հնչում է կառավարչի խիստ ձայնը.

—Գոմոզո՛վ, բռնիր Արինայի ձեռքը և դուրս արի. դէհ շո՛ւտ...

Դուռը բացուեց. դռան առաջ կանգնած էր կայարանի կառավարիչը։ Նա գլուխ էր տալիս և ասում.

—Շնորհաւորում եմ ձեր օրինաւոր ամուսնութիւնը։ Հրամեցէք։ Երաժշտութիւնը սկսեցէք։

Գոմոզովը քայլեց շէմքի վրայից և կանգ առաւ՝ խլանալով յիմար անճոռնի աղաղակից։ Դռան յետևը կանգնած էին Լուկան, Եագօդան և Նիկոլայ Պետրովիչը։

Լուկան բռունցքով խփում էր դոյլին և անճոռնի ուէնօր ձայնով ճղճղում էր. զինուորն ածում էր շուին, իսկ Նիկոլայ Պետրովիչը ձեռքն օդի մէջ թափ էր տա-

լիս և թշերը ուռցնելով՝ շրթունքներով անում է.

—Պում։ Պում։ Պում—պում—պում։

Դոյլը դոդոում էր, շուին շուացնում։ Մաավէյ Եգորովիչը հոհրոում էր՝ կողքերը բռնելով։ Ծիծաղում էր և նրա օգնականը՝ տեսնելով Գոմոզովին, որ շուարած կանգնած էր նրանց առաջ՝ գունատ դէմքով և ամօթահար ժպիտը դողդոջուն շրթունքներին։ Նրա յետևը՝ իբրև անշարժ արձան, կանգնած էր Արինան՝ գլուխը կրծքին քարշ արած։

—«Տիմոֆէյին Արինան

—«Քաղցր խօսքեր է ասում»!—

երգում էր Լուկան մի անմիտ բան և Գոմոզովին զզուելի ծամածռութիւններ էր անում։ Իսկ զինուորը մօտեցաւ Գոմոզովին և, շուին հէնց նրա ականջին դէմ անելով՝ ածում էր։

—Դէհ, գնացէք... հ՞ը... թեանցուկ արա՛ նրան... գոռում էր կայարանի կառավարիչը՝ ծիծաղից թուլանալով։ Դրանց առաջը՝ պատշգամբի վրայ կանգնած էր կինը օրօրւում էր այս ու այն կողմը՝ ճղճղալով.

—Մօտիա *)... բաւական է... ախ, մեռայ։

—«За мигъ свиданія

«Терплю страданія»!—**)

երգում էր Նիկոլայ Պետրովիչը հէնց Գոմոզովի բթի տակ։

—Ուռհա՜ նորապսակներին.—թելադրեց Մաավէյ Եգորովիչը, երբ Գոմոզովն առաջ շարժուեց։ Ու չորսը միասին «Ուռ-հա՜» բղաւեցին միաձայն. զինուորը գոռում էր դղրդեցնող բոմբ ձայնով։

Արինան գնում էր Գոմոզովի յետևից՝ գլուխը

*) Մօտիա = Մաավէյ անուան փաղաքշական ձևը։ Ս. Թ.

**) «Տեսութեան մի վայրկեանի համար տանջանքներ եմ կրում։»

բարձր բռնած՝ բերանը բաց և թեները կախ. նրա աչքերը բութ հայեացքով առաջն էին նայում, սակայն դժուար թէ բան էին տեսնում։

—Մօտիա, հրամայիր, թող համբուրուեն. հա-հա-հա։

Նորապսակնե՛ր, դառն է *),—բացականչեց Նիկոլայ Պետրովիչը. իսկ Մաավէյ Եգորովիչը հարկադրուեց յենուել ծառին, որովհետև ծիծաղից ոտքերի վրայ չէր կարողանում կանգնել. իսկ դոյլը շարունակ դոդրոում էր, շուին շուացնում, տնաղ անում և Լուկան պարելով երգում էր.

—Մեզ համար, Արինա։

Լաւ օյին հանեցիր։

Իսկ Նիկոլայ Պետրովիչը նորից շրթունքներով անում է.

—Պում-պում-պում։ Տա՜-տա՜-տա՜։ Պում-պում։ Տա՜-տա՜-տա՜։

Գոմոզովը հասաւ զօրանոցի դռանը և ներս ծռկուեց։ Արինան մնաց դուրսը՝ շրջապատուած խենթութեան հասած մարդկանցով։ Նրանք բղաւում-ճղաւում էին, հոհրոում, շուացնում էին նրա ականջին և ցատկտում էին նրա շուրջն անմիտ բերկրութեան մէջ։ Նա կանգնած էր նրանց առաջն անշարժ դէմքով, կեղտոտ, զզզուած, և՛ խղճալի, և՛ ծիծաղելի։

—Թագաւորը ծլկուեց, իսկ... թագուհին մնաց,—բղաւում էր Մաավէյ Եգորովիչը կնոջը՝ ցոյց տալով Արինային և դարձեալ ծիծաղում, կուչ էր գալիս։

Արինան գլուխը դարձրեց դէպի նա և զօրանոցի

*) Ռուսաց մէջ հարսնևորները նորապսակների կենացը խմելիս ասում են այդ խօսքը — «Горько»—դառն է. դրանով ցանկութիւն են յայտնում, որ նրանք հրապարակով համբուրուեն։ Ս. Թ.

մօտով գնաց դաշտը։ Սուլոցը, ճիչը, ծիծաղը հետևում էին նրան։

—Բաւական է, թողէք.—կանչում էր Սօֆիա Իվանովնան։—Թողէք, խելքը հաւաքէ։ Շուտով ճաշ պիտի պատրաստէ։

Արինան գնում էր դէպի տափաստանը, որտեղ երկաթուղու գծից դուրս կանգնած էր հասկալից արտը։ Նա գնում էր դանդաղ, իբրև մի մարդ, որ խոր մտածման մէջ էր։

Ի՞նչ, ինչ. —կրկին ու կրկին հարցնում էր Մատվէյ Եգորովիչը այս կատակին մասնակցողներին, որոնք իրար պատմում էին զանազան մանրամասնութիւններ նորապսակների կեանքից։ Ու բոլորը ծիծաղում էին։ Իսկ Նիկոլայ Պետրովիչը այստեղ էլ ժամանակ գտաւ մի փոքրիկ խմաստակութիւն մէջ բերելու.

—„Смѣяться, право, не грѣшно
„Надъ тѣмъ, что кажется смѣшно“!

—ասաց նա Սօֆիա Իվանովնային և ազդուարար աւելացրեց.

—„Но много смѣяться—вредно“. *)

Այդ օրը կայարանում շատ ծիծաղեցին, բայց վատ ճաշեցին, որովհետև Արինան չեկաւ կերակուր եփելու, և ճաշը պատրաստեց ինքը տիկինը։ Սակայն վատ ճաշն էլ չփչացրեց լաւ տրամադրութիւնը։ Գոմոզովը զօրանոցից դուրս չեկաւ մինչև իր հերթը, իսկ երբ դուրս եկաւ, նրան կանչեցին կառավարչի գրա-

*) „Смѣяться, մեղք չէ ծիծաղելն այն դանի վրայ, որ թւում է ծիծաղաշարժ“։

— Բայց շատ ծիծաղելը վնասակար է։

սենեակը, և այնտեղ Նիկոլայ Պետրովիչն սկսեց հարց ու փորձ անել նրան, թէ ինչպէս նա «գրաւեց» իր գեղեցկուհուն, մինչ Մատվէյ Եգորովիչը քահ-քահ ծիծաղում էր։

—Իր տարօրինակութեամբ սա առաջին կարգի պատուիրազանցութիւն է,—ասաց Նիկոլայ Պետրովիչը կառավարչին։

—Հէնց այդ է որ կայ,—յօնքերը կախ՝ ժպտալով ասաց ծանրաբարոյ սլաքպանը։ Նա գլխի ընկաւ, որ եթէ Արինայի մասին պատմելիս նրան ձեռք առնի, իր վրայ քիչ կծիծաղեն։ Եւ նա պատմում էր.

—Սկզբում նա ինձ աչքով էր անում...

—Աչքով էր անո՞ւմ։ Հա-հա-հա։ Նիկոլայ Պետրովիչ, երևակայեցէք թէ նա՝ այն գունչ ու մութի տէրը՝ ինչպէս աչքով կանէր։ Հիանալի։

—Հա, նա աչքով է անում. իսկ ես տեսնում եմ և ինքս ինձ մտածում եմ—էյ, խաղ ես անում։ Յետոյ, ասում է, կուզի՞ս, քեզ համար, ասում է, շապիկ կարեմ...

—Բայց «բանը շապիկ կարելը չէ»...—Նկատեց Նիկոլայ Պետրովիչը և բացատրեց կառավարչին.—Այս, գիտէք, Նեկրասովից է, «Нарядная и убогая» ոտանաւորից։ Շարունակէք Տիմոֆէյ։

Ու Տիմոֆէյը շարունակեց խօսել՝ առաջ բիչ ճընշուելով, յետոյ հետզհետէ ստից խրախուսուելով, որովհետև տեսնում էր, որ սուտն իրան օգտակար է։

Իսկ նա, որի մասին խօսում էր Գոմոզովը, այդ ժամանակ պառկած էր տափաստանում։ Նա մտաւ խորը՝ հացարոյսերի ծովի մէջ, ծանր ինչաւ գետնի վրայ և երկար անշարժ պառկած էր երկրի երեսին։ Իսկ երբ արևը այնչափ այրեց նրա կռնակը, որ նա այլ ևս չկարողացաւ տանել նրա կիզիչ ճառագայթների ազդեցու-

թիւնը, նա շուռ եկաւ մէջքի վրայ և երեսը ծածկեց ձեռքերով, որ չտեսնի չափազանց պարզ երկինքը և չափից դուրս պայծառ արևը։

Հացաբոյսերի չորացած հասկերը խշխշշում էին այս կնոջ շուրջը, որ ողջ-ողջ մեռած էր ամօթից, անկումից, և անդադար հոգածութեամբ ճռճռում էին անհամար մորեխները։ Ու շոգ էր։ Նա փորձեց մտաբերել իր աղօթքները և չկարողացաւ—աչքերի առաջ գընում—գալիս էին վայրագ պար խաղալով՝ ծիծաղացող այլանդակ դէմքեր, իսկ ականջին հնչում էր Լուկայի ձայնը, շուրի ծիծաղաշարժ ողորմելի շուրցը և հռհռոցը։ Սրանից էր, թէ շոգից՝ նրա կուրծքը տրաքում էր. և ահա նա վերնազգեստը քանդելով՝ իր մարմինը թողեց արևի ճառագայթների տակ՝ յոյս ունենալով, որ այդպէս իրան հեշտ կլինի շունչ քաշել։ Եւ այդ ժամին, երբ արևն այրում էր նրա կաշին, ներքուստ նրա սիրտը ծակում էր մի զգայութիւն, որ մօտ էր ցաւի և նման այրոցքի։ Ծանր հոգւոց հանելով՝ հազիւ երբեմն նա շշնջում էր.

Մեղայ Աստուծոյ...

Բայց իբրև պատասխան լսում էր միայն հացաբոյսերի չոր խշշիւնը և մորեխների հոգատար ճռճռոցը։ Գլուխը քիչ բարձրացնելով հացաբոյսերի ալեծածան ծովի վրայ, նա տեսնում էր նրա ոսկեզօծ փողփողացող երեսը, ջրհան մեքենայի շինութեան սև խողովակը, որ ցցուած էր կայարանից հեռու ձորի մէջ, և կայարանի շինութիւնների կտուրները։ Ուրիշ ոչինչ չկար այս անսահման դեղին հարթավայրի վրայ, որ ծածկուած էր երկնքի կապուտակ գմբեթով, և Արինային թւում էր, թէ ինքը մեն-մենակ է երկրիս վրայ, պառկած է հէնց նրա մէջ տեղը, և այժմ արդէն ոչ ոք

երբէք չի գալ նրա մօտ նրա միայնութեան ծանրութիւնը թեթևացնելու—ոչ օր. երբէք։

Երեկոյեան դէմ նա լսեց աղաղակներ.

—Արինա-ա։ Արի՛շկա. սատանայ...

Ձայներից մէկը Լուկայինն էր, միւսը զինուորինը։ Արինան ցանկանում էր լսել և մի երրորդ ձայն, բայց նա Արինային չէր կանչում, և ահա նա լաց եղաւ յորդառատ արցունքներով, որոնք արագ հոսում էին նրա ծաղկատաք այտերից և թափւում կրծքին։ Նա լաց էր լինում և իր մերկ կուրծքը թաղում էր չոր և տաք հողի մէջ, որ ընկճէ-ոչնչացնէ այն տապը, որ աւելի տանջում էր նրան։ Լալիս էր և լռում էր՝ զսպելով իր հեկեկանքները, ասես թէ վախենում էր, որ ով որ է լսէ և նրան արգելէ լաց լինել։

Երբ վրայ հասաւ գիշերը, վեր կացաւ և կամաց գնաց կայարանը։

Կայարանի շինութիւններին հասնելով՝ նա թինկ տուեց ներքնատան պատին և երկար կանգնած էր այստեղ, դիտելով տափաստանը։ Գալիս և անհետանում էին ապլանքատաք կառախմբերը։—Նա լսում էր, թէ ինչպէս զինուորը պատմում էր կոնդուկտորներին իր անկումը, և կոնդուկտորները ծիծաղում էին։ Խաղաղ, լուսնկայ գիշեր էր... ծիծաղն հեռու տարածւում էր ամայի դաշտում, որտեղ հազիւ լսելի էր Սիբիրիայի մկան ծւծրւոցը։

—Մեղայ Աստուծոյ...—հոգւոց էր հանում կինը՝ պինդ հպելով պատին։ Բայց այդ հառաչանքները չէին թեթևացնում նրա սիրտը ճնշող ծանրութիւնը։

Առաւօտեան դէմ նա զգուշութեամբ կայարանի կտուրը բարձրացաւ և այնտեղ կախուեց՝ օղակ շինելով

այն պարանից, որի վրայ երբեմն չորացնում էր լուացած սպիտակեղէնը։

Երկու օր յետոյ Արինային գտան դիակի հոտից։ Սկզբում բոլորն էլ վախեցան, յետոյ սկսեցին դատողութիւն անել, ո՞վ է մեղաւոր այդ բանում։ Նիկոլայ Պետրովիչը անհերքելի փաստերով ապացուցեց, որ մեղաւոր է Գոմոզովը։ Այն ժամանակ կայարանի կառավարիչը սլաքպանի դունչ ու մութին տուեց և խրոխտաբար հրամայեց նրան լռել։

Եկան պաշտօնեաները, քննութիւն կատարեցին։ Դուրս եկաւ, որ Արինան մելամաղձոտութիւն ունէր... Ճանապարհի վարպետի մշակներին յանձնեցին դաշտը տանել դիակը և այնտեղ հողել։ Եւ երբ այդ էլ կատարուեց—կայարանում նորից թագաւորեց կարգն ու անդորրութիւնը։

Ու դարձեալ նրա բնակիչները սկսեցին ապրել օրը չորս բոլէ՝ հալումաշ լինելով ձանձրոյթից և միայնութիւնից, անգործութիւնից և շոգից, նախանձով դիտելով կառախմբերին, որոնք սահում—անցնում էին նրանց առաջից։

. . . Իսկ ձմեռը, երբ տափաստանում շաչելով—շառաչելով փչում է ցրտաշունչ փոթորիկը՝ փոքրիկ կայարանը ձիւնով և վայրագ ձայներով լցնելով,—կայարանի բնակիչների կեանքն աւելի ձանձրալի է։

1897

ՊԵՏ. ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГСС БИБЛИОТЕКА
ՀՍՍՌ-Արմ ССР
Ա. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ
им. А. Абовяна

ՀՀ Ազգային գրադարան
NL0310719

10779

ԼՈՅՍ ՏԵՍԱԼ

Թարգմանական գրադարանի բ. գրքույկը

ՄԱՔՍԻՄ ԳՈՐԿԻ — պատմուածքներ — 10 կոպ.

ԳԻՆՆ Է 20 ԿՈՊ.

Վաճառատուն Լ. Բոյոր գրավաճառանոցներում